

ԱՊՐԵԼԻ ԴՐՈՒՅՄԱ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ Ժ. ՏԱՐԻ, ԹԻՒ 92, ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ 2012



ՀՀ ՍՓԻՒՐ-ՔԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄՈՒՅՑ ՅԱԿՈԲԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՓԻՌՈՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՍՈՒՇ ՅԱԿՈԲԵԱՆԻ ԱՅՑԸ ՆՈՐ ԶՈՒՂԱ



Երկուշաբթի՝ 2012 թւականի հոկտեմբերի 1-ին, Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի հրաւերով, Նոր Զուղա ժամանեց ՀՀ Սփիլոքի նախարար Հրանուշ Յակոբեանը՝ ընկերակցութեամբ Իրանում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Գրիգոր Առաքելեանի: Նոյն օրը, երեկոյեան ժամը 7:30-ին, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան մարզաքանին կից բացօդեայ տարածքում, նախարար Հրանուշ Յակոբեանին եւ դեսպան Գրիգոր Առաքելեանին շերմ դիմաւորեցին հոգԶ. Տ. Անահիա Վլդ. Գուճանեանը, քահանայ հայրեր, ազգային մարմինների եւ կառուցների ներկայացուցիչներ ու համայնքի ժողովուրդ:



Այս առիթով միջոցառում էր կազմակերպել հաղորդավար Կային Տէր-Մարտիրոսեանը ողջոյնի խօսք արտասանեց, որից յետոյ արտայայտեց Թեմական Խորհրդի ատենապետ ալբ. Նուլ Մինասեանը: Նա ողջունելով նախարարի ներկայութիւնը Նոր Զուղայում, անդրադարձաւ 400-ամեայ համայնքի դերակատարութեանը՝ պատմութեան տարբեր ժամանակահատածներում: Պին. Մինասեանը

խորհրդանշական համարելով նախարարի առաջին ացելութեան զուգադիպումը Սփիլոքի նախարարութեան ստեղծման (որը տեղի ունեցաւ 2008 թւականի հոկտեմբերի 1-ին) 4-ամեակին, երախտագիտութեան խօսք ուղղեց նախարարին՝ Հայաստանի Հանրապետութեան ամենակարեւոր ու մեծ աշխատանքային ոլորտ պարունակող նախարարութեան պատասխանատութիւնն ըստանձնելու համար եւ աւելացրեց. «Նոր Զուղայի պատմական համայնքը երկար տարիների ընթացքում իրանի իշխանութիւնների բարի մօտեցումների արդիւնքում, կարողացել է բարգաւաճել ու զարգանալ եւ իր դերակատարութիւնն ունենալ համագոյային բոլոր միջոցառումներում ու Արցախի ազգային-ազատագրական պայքարում։ Նոր Զուղան այսօր իր ներդրումն ունի նաև Հայաստանի պետականութեան հզրացման ուղղութեամբ»։



Այնուհետեւ արտայայտուեց դեսպան Գրիգոր Առաքելեանը՝ Սփիլոքի նախարարին ընկերակցելն իւրաքանչիւր հայ դեսպանի համար մեծ պատի համարելով։ Նա նշելով, որ տկն. նախարարն Իրան է ժամանել՝ մասնակցելու դեսպանատան կողմից

կազմակերպած ՀՀ անկախութեան 21-րդ տարեդարձին նվիրած միջոցառմանը, շնորհաւորանքի խօսք յայտնեց ներկաներին՝ անկախութեան 21-ամեակի կապակցութեամբ:

Դեսպանի խօսքին յաջորդեց օրևայ գեղարեսական բաժինը, որտեղ պարային կատարումներով, ասմունքներով ու հայրենասիրական եւ աշուղական երգերով հանդէս եկան Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միասորի գեղարեսական խմբերի անդամները՝ ղեկավարութեամբ Ռիմա Սիմոնեանի, Նոնա Բախչեանի եւ Արմեն Ամիրխանեանի:



Որպէս օրևայ եզրափակիչ ելոյթ, ներկաներին իր պատգամն ուղղեց նախարար Հրանուշ Յակոբեանը: Նա դրատանքով արտայայտելով նոր Զուղայեցու մասին, կարեւորութեամբ ընդգծեց անկախութեան 21 տարիների ընթացքում յաղթահարած մի շարք դժվարութիւններ ու ծերքերումներ եւ ասաց. «**Մենք այսօր կարողացել ենք աշխարհին ներկայանալ որպէս վստահելի եւ յուսալի զործընկեր: Այսօր միջազգային աշխարհում Հայաստանի Հանրապետութեան անունը տալիս են յարգանքով ու հպարտութեամբ եւ այս ամենն եղել է այն պատճառով, որ մեր կողքին է հայկական Սփիւռքը»:**



Նախարարն անդրադառնալով նոր Զուղայի մեծ դերակատարութեանը Հայատան-Իրան յարաբերութիւններում, ասաց, որ Հայաստանն այսօր հարեւան եւ բարեկամ երկիր Իրանի հետ ունի տարբեր ոլորտներում բարձրագույն կարգի յարաբերութիւններ եւ Իրանում ապրող հայկական համայնքն է դարձել այն ուժեղ ու հաստատուն կամուրջը, որի շնորհիւ գոյութիւն ունի այս յարաբերութիւնը: Հրանուշ Յակոբեանն իր խօսքի աւարտին անդրադառնալու նաեւ սիրիահայութեան ներկայ իրավիճակին եւ նրանց օգնելու համար ՀՀ կողմից ստեղծած մի շարք դիվութիւններին, նաեւ դատապարտեց Հունգարիայի կողմից ոճրագործին Աղբեկան արտայանձնելու անընդունելի քայլը:

Միջոցառման աւարտին նախարարի ձեռամբ նախարարութեան ունկէ մեդալներով պարգևատրւեցին՝ Սպահանի Հայոց Թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբակն եպս. Զարեանը եւ Թեմական Խորհրդի ատենապետ նույն Մինասեանը: Սրբագան Հօր շրջանից բացակայութեան պատճառով, մեդալն ստացաւ հոգշ. Տ. Անանիա վլր. Գունանեանը: Ալ-Շունիետե տկն. Յակոբեանը պատույ գրեր շնորհեց Թեմի Պատգամատրական Ժողովի Դիւանի եւ Կրօնական Խորհրդի ատենապետեր Աշոտ Դաւթեանին ու Արշալոյս Խուդավերդեանին, իսկ Վ. Սարոյեանի անան մեդալներով պարգևատրեց վասարկաւոր ուսուցիչ Լեւոն Մինասեանին ու գրող-բանաստեղծ Ազատ Մաթեանին: Վերջում Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեանը յանձնեց յուշաներ, որն ստացաւ Միութեան Կենտրոնական Վարչութեան փոխնախագահ Ալիկ Մելիքեանը:

Միջուցառմանը յաջորդեց հիւրերի պատին կազմակերպած ընթրիբերեկոն, որին հրաւիրած էին նաեւ Թեմի ազգային մարմինների եւ կառոյցների ներկայացուցիչները:

**ՀՀ ՍՊԻՌՈՒԹԻՒՆՆԱԽԱԳՐԱԿՐ ՀՐԱՄԱՆԻՑ ՅԱԿՈՐԵՎԵԼՆԻ և ՅԱՅԵԼՈՒԹԻՒՆԸ
Ս. ԿՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔ ԵՒ Ն.Զ. ՀԱՅՈՑ ՀՅԴՎԵՅԻՆ ԿՐԹՎԱՀԱՄԱՎԱՐ**

Երեքամբ՝ 2012 թականի հոկտեմբերի 2-ի առաւոտեան ժամը 9:30-ին, ՀՀ Սփիտքի նախարար Հրանուշ Յակոբեանն այցելեց Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան առաջնորդանիստ Վանքը։ Նախարարին ընկերակցում էր Իրանում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Գրիգոր Առաքելեանը։ Վանքում հիւրերին դիմաւորեցին հոգջ. Տ. Անանիա վորդ. Գունանեանն ու ազգային մարմինների ներկայացուցիչներ։



Հրանուշ Յակոբեանն սկզբում այցելեց Ս.Ս. Վանքի Ս. Ցովսէփ Արեմաթացի եկեղեցին ու թանգարանը, ուր նրան բացատրութիւններ փոխանցւեց եկեղեցու պատմական անցեալի եւ թանգարանում զետեղած իրերի մասին։



Թանգարան կատարած այցելութեան աւարտին, նախարարն իր տպաւորութիւնները գրանցեց թանգարանի յուշամատեանում, ապա Հայոց Յեղասպանութեան Բիւրաւոր Նահատակների Յուշարձանի առջեւ իր յարգանքի տուրքը մատուցեց անմեղ զոհերի

յիշատակին։

Առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում պաշտօնական հանդիպում կայացաւ նախարարի, հոգջ. Տ. Անանիա վորդ. Գունանեանի եւ Սպահանի Հայոց Թեմի ազգային մարմինների ներկայացուցիչների միջնեւ։



Հանդիպման ընթացքում Թեմական Խորհրդի ատենապետ Նուէլ Մինասեանն իր խօսքում կարեւորութեամբ ընդգծեց, որ Սփիտքի նախարարութիւնը պէտք է առաւել աշխատանք կատարի Սփիտք-Հայաստան յարաբերութիւնների ամրապնդման ուղղութեամբ։ Նա բարի երթ մաղթելով նախարարին, շնորհակալութիւն յայտնեց նրան, որ Իրան ժամանելու կարծ ժամանակահատածում, ընդառաջելով Թեմական Խորհրդի հրաւերին այցելեց Նոր Ջուղա։



Հանդիպման աւարտին Հրանուշ Յակոբեանին նիւրեց Ս. Ամենափրկչեան Վանքի պատկերով Սպահան քաղաքի ծեռարևեստին պատկանող մի յուշանէւր եւ «Պատմութիւն Նոր Ջուղայի» գիրքը։

Հրանուշ Յակոբեանի Նոր Ջուղա այցելութեան վերջին հանգրիւանն եղաւ Նոր Ջուղայի Հայոց Ազ-

գային Կրթահամալիրը: Նա առաւտեան ժամը 11:30-ին այցելեց Կրթահամալիր, որտեղ հանդիպեց նախակրթարանի, «ԱրմԷն», «Քանանեան» և «Կատարինեան» դպրոցների աշակերտ-աշակերտութիւներին ու պատասխանատուներին: Բակում համախմբած ներկաները նախարարին դիմաւրիցին բուռն ծափողջոններով: Ողջոնի եւ բարիգալաստեան խօսք ընթերցեց աշակերտութիւն Մեղոնի Ղուկասեանը, որից յետոյ, նոյնպէս ողջոնի խօսքով, հանդէս եկաւ Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի ատենապետ Զանտոն Աղաբարայեանը՝ հակիրճ տեղեկութիւններ փոխանցելով Նոր Զուղայի հայոց ազգային դպրոցների անցեալի եւ կրթական համակարգի մասին:



Ծրագրի շարունակութեան մէջ ելոյթ ունեցաւ նախարար Հրանուշ Յակոբեանը: Նա իր խօսքում շնորհակալական խօսք ուղղեց ծնողներին՝ իրենց երեխաներին հայոց դպրոց ուղարկելու, ուսուցիչներին՝ աշակերտներին կրթելու ու դաստիարակելու եւ ազգային իշխանութեանը, Կրթական Խորհրդին ու բարերարներին՝ իրենց Շերտրումներով՝ հայկական դպրոցներ կառուցելու եւ զարգացնելու համար: Շնորհակալական խօսք ուղղեց նաև Իրանի Խալամական Հանրապետութեան՝ հայոց դպրոցների համար դիլիրին պայմաններ ստեղծելու համար:




Նախարարն իր խօսքի աւարտին աշակերտներին յորդորեց՝ սերտել լաւ եւ շանասիրաբար, լաւ մարդ դառնալ եւ նիրեալ հայ լինելով՝ հաւատարիմ մնալ:

հայկական արժեքներին:



Միջոցառման վերջին բաժնում աշակերտութիւններ Վանայ Շիրամեանն ու Թանիա Մինասեանը կատարեցին «Մենք ենք ու սարերը մեր» հայրենասիրական զուգերգը:



Նախարարը բոլոր աշակերտների եւ ուսուցիչների հետ լուսանկարելուց յետոյ, անցաւ կրթահամալիրին կից Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարան եւ մօտիկից ծանօթացաւ դպրոցին: Նա այցելեց նաև Կրթահամալիրի տարբեր բաժիններ:



Նախարար Հրանուշ Յակոբեանը մասնակցեց Կրթահամալիրի սրահում նախատեսած ընդունելութեանը, որից յետոյ աւարտելով Սպահանի Հայոց Թեմ կատարած իր այցը՝ վերադարձաւ Թեմին:

**ՍՊԱՀԱՆԻ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ
ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՈՐԷՆԻ ԱՅՅԵ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔ**



Երկուշաբթի՝ 2012 թւականի սեպտեմբերի 3-ին, Սպահանի Մշակոյթի եւ Առաջնորդութեան Հիմնարկի նորանշանակ ընդհանուր տնօրէն պրճ. Շալուին, Մշակոյթի եւ Առաջնորդութեան Փոքրամասութիւնների գրասենեակի պետ պրճ. Թաքաթաբայիի եւ Հիմնարկի Հանրային Կապի Գրասենեակի պատասխանատուի ընկերակցութեամբ այցելեց Ս. Ամենափրկչեան Վաճր եւ Երկայացաւ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբեկն եպս. Զարեանին: Հանդիպումը տեղի ունեցաւ Ս.Ա. Վաճրի Շաղկեայ դահլիճում, որտեղ ներկայ էին նաև Իրանի Խալամական Խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամատու պրճ. Ռոբերտ Բեգլարեանը, Սպահանի Հայոց Թեմի Պատգամատորական Ժողովի Դիւանի ատենապետ պրճ. Աշոտ Դալթեանը, Թեմական Խորհրդի ատենապետ պրճ. Նոէլ Մինասեան, նոյն Խորհրդի անդամ պրճ. Մկրտիչ Աւետումեանը եւ Կրօնական Խորհրդի ատենապետ պրճ. Արշալոյս Խուդավերդեանը:

Հանդիպման սկզբում, առաջնորդ Սրբազն Հայրը բարի գալուստ մաղթեց պրճ. Շալուին, եւ շնորհակալութիւն յայտնեց նրա այցելութեան առթիւ, յոյս յայտնելով, որ նախկինի պէս սերտ յարաբերութիւններ են զարգանալու Հիմնարկի եւ Ազգային Առաջնորդարանի միջեւ:

Պրճ. Շալուին եւս ուրախութիւն յայտնեց հանդիպման առթիւ եւ վստահիեցրեց, որ այսուհետեւ եւս արդիւնաւէտ գործունեութիւն եւ մտերիմ յարաբերութիւններ են ծաւալելու. առ այդ առաջարկեց, որ յաճախակի լինեն նմանատիպ քաղաքավարական եւ առաւել եւս գործնական հանդիպումները՝ հայութեանը վերաբերող եւ պետական զանազան խնդիրների շուրջ պատշաճ կեցւածք ճշտելու եւ միասնական ծրագրերի վերաբերեալ լաւագոյն վերաբերում որդեգրելու համար:

Արտայայտուեց նաև պրճ. Նոէլ Մինասեանը պրճ. Շալուինի նոր պաշտօնի ստանձման առթիւ շնորհաւորական խօսքեր ասելով եւ բարեմաղթանքներ կատարելով:



Հանդիպումից յետոյ, պրճ. Շալուին իրեն ընկերակցող պատիրակութեան հետ այցելեց Ս.Ա. Վաճրի Թանգարան եւ ուշադրութեամբ դիտելով՝ իր հիացմունքն ու տպաւորութիւնները գրի առաւ բարձրաստիճան այցելուների համար նախատեսած տոմարում: Հիւրերը նաև այցելեցին Ս. Ցովսէփ Արեմաթացի եկեղեցի, որտեղ մօտիկից ծանօթացան Հայ Եկեղեցու կառոյցի եւ հայկական նրբառ ու բարձրորակ արևստի հետ: Վերջում նորանշանակ տնօրէնը թեմակալ առաջնորդին եւ Թեմական Խորհրդին պաշտօնապէս հրաւիրեց ացելելու իրենց հիմնարկութիւն:

Պրճ. Շալուին մէկ ժամ տեսած ծանօթացման եւ այցելութեան սոյն հանդիպումից լաւագոյն տպաւորութիւններով մեկնեց Վաճրից:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՎԱԿԱՎԵՆԵՐ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԵԱՆ ՎԱՆՔԻՒՄ

2012 թականի հոկտեմբերի 29-ի առաօտեան ժամը 10:30-ին, Ս. Ամենափրկչեան Վանք այցելեցին Իրանում Գերմանիայի դեսպանը, Գերմանիայի Խորհրդարանում զանազան կուսակցութիւնների պատգամաւորները, Իրանի Արտաքին Գործոց Նախարարութեան, Սպահանի նահանգապետարանի եւ քաղաքապետարանի ներկայացուցիչները:



Պատգիրակութիւնը Ս.Ա. Վանքի Յովսէփ Արեմայտացի եկեղեցի եւ Խաչատուր Կեսարացի թանգարան այցելելուց յետոյ, Ծաղկեայ դամիճնում հանդիպում ունեցաւ Սպահանի Հայոց Թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանի հետ: Հանդիպմանը ներկայ էին նաև Իրանի Խալ. Խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը եւ Ազգային Առաջնորդարանի մարմինների ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում, Գերմանիոյ պատգիրակութեան կողմից բազմազան հարցումներ ուղղեցին առաջնորդ Սրբազն Հօրը՝ Հայոց Եկեղեցուն եւ հայ համայնքին առնչող տարբեր խնդիրների շուրջ, որոնց սպառիչ պատասխաններ տրեցին թեմակալ առաջնորդի միջոցով:

Առաջնորդ Սրբազն Հայրն իր խօսքերի մէջ, անդրադառնալով Իրանում հայութեան կենցաղային բարօր իրավիճակին, յատուկ կերպով շեշտեց. «Երբ չին ջուղայի շրջանում, Աղրբեջանի Հանրապետութեան աւերող ուժերը հողի են հաւասարեցնում հայկական դարաւոր պատմական յուշակոթողներն ու արւեստի եւ մշակոյթի բացառիկ օրինակներ հանդիսացող հնամենի խաչքարերը, Արաքսի այս մէկ

ափում՝ իրանեան երկրում, պետութիւնն օժանդակում է վերակառուցելու եւ պահպանելու մեր պատմական կոթողները, վանքերն ու եկեղեցիները»:

Հանդիպման աւարտին, Խաչատուր Կեսարացի թանգարանի մուտքի առջեւ լուսանկարիելուց յետոյ, հիւրերը հրաժեշտ տվեցին Վանքին:



ՀԱՇՈՐԴ-ՎԳՐՈՒԹԻՒՆ

Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ըստորէն դատապարտում է մեծապետական ուժերի միջոցով պատրաստած տեսաֆիլմը եւ անվայել արարքները՝ իսլամ կրօնի հիմնադիր Մուհամմէդ մարգարէին անարգելու ուղղութեամբ, եւ պահանջում է պատժել հեղինակներին եւ գործակատարներին:

Այս կապակցութեամբ, Սպահանի հեռուստատեսութեան լրատական բաժինը, հինգշաբթի՝ 2012 թականի սեպտեմբերի 20-ին, հարցազրուց ունեցաւ Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նուէլ Մինասեանի հետ: Պրն. Մինասեանը խստի դատապարտելով անհանդուրժականութեան ոգի տարածող գործողութիւնները, շեշտեց. «Մեր կարծիքով, խոտորող եւ բռնակալական հոսանքները մտադիր են միջազգային մակարդակով տարածայնութիւններ առաջացնել միաստածեան կրօնների հետեւորդների միջեւ՝ իրենց մուժ եւ չարաբաստիկ նպատակներն իրագործելու համար: Առայդ, անհրաժեշտ է զանազան երկրների քաղաքական եւ կրօնական դեկապարագներն ուշադրութեամբ եւ զգօնութեամբ համապատասխան դիրքորոշում որդեգրեն նման արարքների դէմ եւ չեղոքացնեն բռնատիրական չարագուշակ դաւադրութիւնները:»

Բարեբախտաբար Հայոց Եկեղեցու կրօնապետերը յատուկ կերպով շեշտում են միաստածեան կրօնների հետեւորդների միջեւ փոխադարձ յարգանքի անհրաժեշտութիւնը եւ այս կապակցութեամբ, Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ իրանի պետական պատասխանատունների միասնական նախաձեռնութեամբ տեւարար երկխօսութիւններ են տեղի ունենում քրիստոնեայ եւ իսլամ հոգեւոր պետերի մակարդակով»:

Հարկ է նշել, որ հարցազրուցը լայն արձագանք գտաւ Սպահան նահանգի հեռուստատեսութեան եւ զանազան լրատութիւնների մէջ:

ԵՊԻՄԿՈՊՈԱՎԱՆ ՏԱՆԴԻՄԱԼԻՈԲ Ս. ՊԱՏԱՐԱԳ Ս. ԳԷՈՐԳ ԶՈՐԱՎԱՐԻ ՏՕՆԻ ԱՌԹՈՒ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ



Ս. Գէորգ Զօրավարի Տօնի առթիւ, Նոր Զուղայի նոյնանուն եկեղեցում կատարեց երկօրեայ արարողութիւն՝ ուրբաթ եւ շաբաթ՝ սեպտեմբերի 28 եւ 29-ին, հաւատացեալ ժողովոդի խուռաներամ մասնակցութեամբ: Ուխտաւոր ներկաներից ոմանք տարիների աւանդութեան համաձայն տօնին նախորդող գիշերները գիշերել էին եկեղեցու բակում, իսկ ոմանք էլ իրենց խորհուրդը կատարեցին նիրատութիւններով ու մատաղներով:



Ս. Գէորգ Զօրավարի Տօնի նախօրէին՝ ուրբաթ օրւաց կէսօից յետոյ ժամը 3-ին, Նոր Զուղայի Ս. Գէորգ եկեղեցում, Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանի նախագահութեամբ եւ հոգչ. Տ. Անահիա վրդ. Գուճանեանի ու քահանայից եւ դպրաց դասերի մասնակցութեամբ, տեղի ունեցաւ աղօրինէք եւ ոչխարների գենում, իսկ երեկոյեան ժամը 7-ին՝ Հակումի արարողութիւն: Արարողութեան աւարտին առաջնորդ Սրբազան Հայրը բնաբան ունենալով Պողոս առաքեալի կորնթացիներին ուղղած երկրորդ նամակից մի հատած, որտեղ առաքեալն ասում է, թէ պարծենում է իր

տկարութիւններով, անդրադարձաւ նրա կեանքին ու գործունէութեանը եւ այսպէս շարունակեց. «Պողոս առաքեալն իր ամբողջ կեանքը հաւատով նէիրեց Աստծուն ու Քրիստոսին եւ Աստծու խօսքը թարգմանեց ու Նրա կամքը յայտնեց մարդկութեանը: Նոյն այդ ոգով մեր բոլոր սուրբերն ապրեցին՝ պարծենալով իրենց տկարութիւններով եւ ամենաղժեար պահերին՝ Աստծով ու Քրիստոսով, որովհետեւ աստածային շնորքը զօրացրեց նրանց»:



Սրբազան Հայրը զուգահեռներ գծելով Պողոս առաքեալի եւ Ս. Գէորգ Զօրավարի կեանքերի միջև, իր խօսքն աւարտեց անդրադառնալով Ս. Գէորգ Զօրավարի հաւատին ու նախատակութեանը:

Շաբաթ՝ սեպտեմբերի 29-ին, Ս. Գէորգ Զօրավարի Տօնի օրը, որը նաեւ Նոր Զուղայի Ս. Գէորգ եկեղեցու անանակոչութեան տօնն է, առաւօտեան ժամը 9:30-ին, գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցեց: Ներկայ էին հոգեւորականց եւ դպրաց դասերը: Երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրիսանեանի:

Պատարագի ընթացքում, յաւուր պատշաճի քարոզեց առաջնորդ Սրբազան Հայրը:



Նա ներկաներին ուղղւած իր հայրական խօսքում յիշելով Քրիստոսի պատգամը՝ քրիստոնէական վարդապետութիւնը հրապարակելու մասին, ասաց. «Մեր բոլոր առաքելներն ու սուրբերը Քրիստոսի պատգամով քայլեցին եւ երբեք չվախեցան, որովհետեւ Յիսուսն ասում է՝ մի՛ վախենաք նրանցից, որ ձեր մարմինն են սպանում, այլ վախեց'ք Աստծուց, ովքեր մարմինն սպանելուց յետոյ, իշխանութիւն ունի ձեզ դժոխք գցելու։ Եթէ ճնճուկներն Աստծու հոգածութեան առարկայ են, ապա մարդը որքա՞ն առաւել։ Հետեւարար, մի՛ մտահոգւէք եւ մի՛ վախենաք»։



Այնուհետեւ Սրբազն Հայրը նշելով, որ Քրիստոնէական Եկեղեցու դարաւոր պատմութեան էջերում կան այնպիսի քաջարի հերոսներ, նահատակներ եւ գործիչներ, ովքեր իրենց կեանքի օրինակով ներշնչման աղբիւր են դարձել իւրաքանչիւր հաւատացեալի համար, անդրադարձաւ Ս. Գէորգ Զօրավարի կեանքին եւ այսպէս շարունակեց. «Այսօր այս եկեղեցու կամարների ներքոյ, եկեղեցու անւանակչութեան տօնի առիթով, եկել ենք մեր ուխտը վերանորոգելու, մեր հաւատը զօրացնելու եւ Ս. Գէորգ Զօրավարի օրինակով մեր

Կեանքն ապրելու»: Թեմակալ առաջնորդը վերջում շնորահակալական խօսք ուղղեց Թեմի հոգեւորական դասին, Կրօնական Խորհրդին, Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեանը, կանանց ու մատաղի յանձնախմբերին, երգեցիկ դասին եւ ժողովրդին՝ իրենց մասնակցութեամբ եւ զօրակցութեամբ Եկեղեցին պայծառացնելու համար։



Ս. Պատարագի աւարտին, գերշ. Սրբազն Հայրը, հոգեւորականց դասի մասնակցութեամբ, Ս. Գէորգ Զօրավարի աջի օրինութեամբ կատարեց Զօրօրինէքի արարողութիւն եւ օրինած ջուրը բաժանեց ներկայ հաւատացեալներին։ Այնուհետեւ Եկեղեցու բակում տեղի ունեցաւ մատաղօրինէքի արարողութիւն եւ պատրաստած հարիսան բաժանեց ժողովրդին։



ՄՐԲՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ

Ժաքարտ՝ 2012 թականի հոկտեմբերի 13-ի առաջութեան, Սրբոց Թարգմանչաց Տօնի առթիւ, Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան Վանքի Ս. Ցովսէի Արեմաթացու եկեղեցում, Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանի նախագահութեամբ, համախաւոր Ս. Պատարագ մատուցեց Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր հովի հոգշ. Տ. Անանիա Վրդ. Գուճանեանի ձեռամբ, որին մասնակցում էին քահանայից ու դպրաց դասերը եւ Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ Արմեն Ամիրխանեանի ղեկավարութեամբ:



Եկեղեցում Ս. Պատարագին ներկայացան Թեմի ազգային մարմինների ներկայացուցիչները, Նոր Զուղայի եւ Շահինշահրի հայոց դպրոցների աշակերտութիւնը՝ տեսչութիւնների, ուսուցիչների ու Ծնողական խորհուրդների ուղեկցութեամբ եւ հաւատացեալ ժողովուրդ:



Ս. Պատարագի աւարտին, եկեղեցում ներկայ աշակերտները հաղորդութիւն ստացան, ապա հոգեւոր դասի եւ ազգային մարմինների ներկայացուցիչների կազմած թափօրի առաջնորդութեամբ քայլեցին դէպի Ս. Ամենափրկչեան Վանքի թանգարանի մուտքի մօտ, որտեղ, տարիների աւանդութեան համաձայն, Ս. Մեսրոպ Մաշտոցի եւ Խաչատուր վրդ. Կեսարացու կիսանդրիների մօտ, իրականացեց աշակերտական գեղարվեստական ծրագիր՝ հաղորդավարութեամբ ուսուցչուի Միգանուշ Տէր-Մարտիրոսեանի:

Աշակերտական ելյալների շարանում, խմբերգով, արտասանութիւններով ու աշակերտական խօսքերով առաջնաբար հանդէս եկան Նոր Զուղայի Հայոց

Ազգային նախակրթարանի, «Արմէն» տարրական համալիրի, «Քանանեան» աղջկանց եւ Կատարինեան» տղայոց ուղեցոյց ու միջնակարգ դպրոցների եւ Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» տարրական ու «Մասիս» ուղեցոյց դպրոցների աշակերտ-աշակերտութիւնները:



Տրագրի աւարտին առաջնորդ Սրբազն Հայրն իր նայրական պատգամն ուղեց ներկաներին: Նա մեծ երախտագիտութեամբ յիշեց Թարգմանչաց վարդապետներին եւ դիմելով ներկայ աշակերտութեանը՝ աւելացրեց. «Այսօր դուք եկել էք Ս. Ամենափրկչեան Վանք՝ ձեր ուխտը նորոգելու հայոց հազարագանձ լեզուի նկատմամբ: Եթէ լաւ սովորէք եւ հայոց լեզուի նկատմամբ հաւատարիմ լինէք, այն ժամանակ դուք արժանի ժառանգորդները կը դառնաք Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Հայրապետի, Մովսէս Քերթողի, Նարեկացիի, Շնորհալիի եւ բոլոր նրանց՝ ովքեր այսպիսի շունչ փոխանցեցին մեզ»: Սրբազն Հայրն իր խօսքի աւարտին շնորհաւորեց բոլոր ուսուցիչներին տօնի առթիւ:



Վերջում ներկաները համախմբւեցին Ս.Ս. Վանքում գտնուող «Քանանեան» դպրոցի հիմնադիր՝ Վառվառէ Քանանեանի շիրիմի շուրջ, որտեղ նախագահութեամբ առաջնորդ Սրբազն Հօր, Հոգեհանգստեան պաշտօն կատարեց Գէորգ եւ Վառվառէ Քանանեանների հոգիների խաղաղութեան համար եւ «Քանանեան» դպրոցի կողմից ծաղկեարսակ տեղադրուց բարերար հայուիու շիրիմին:

ԿՇԵՐԵՑ ԱՅԻ ՀԱՅՐԴԱՅԻ Ա. ԽԱՅԵԼԻ ՓՐԵՄԵԼԻ ԸՆԿԵՐ ՏՐԱՎ

Երկուշաբթի՝ հոկտեմբերի 22-ի երեկոյեան, Սպահանի Հայոց Թեմի հայատաւոր հայորդիներ համախըմբ-ին էին նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան Վանքում տօնելու Ս.Ա. Վանքի Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցու անանակոչութեան տօնը:

Ս. Պատարագ մատուցեց Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանի: Օրոյ պատարագիչը եւ քարոզիչն էր Ատրպատականի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ռ. Վրդ. Չիֆթենանը, որին սպասարկում էին հոգեւորականց դասը, իսկ երգեցողութիւնը կատարում էր Ս. Ամենափրկչեան Վաքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրիսանեանի:



Նախբան օրոյ քարոզը, գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը, իր, հոգեւորականց դասի, Թեմի ազգային իշխանութեան եւ ժողովողի անունից ողջունեց գերշ. Հայր Սուրբի Անրիկայութիւնը նոր Զուղայում, շնորհաւորելով նրան՝ Ատրպատականի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովի կողմից որպէս իր Թեմի առաջնորդ ընտրելու կապակցութեամբ: Այնուհետեւ, Անրիկայ հայատացեալներին

իր պատգամը փոխանցեց գերապ. Տ. Գրիգոր Ռ. Վրդ. Չիֆթենանը:



Հայր Սուրբն անդրադառնակով Ս. Յովսէփ Արեմաթացու կեանքին ու հայատին, կարեւորութեամբ ընդգծեց. «Այսօր մեր բազմազ-րազ առօրեայի մէջ մեզանից շատերն ունեն տնտեսական, կրթա-կան, զաւակների հետ կապւած եւ այլ մտահոգութիւններ: Հաւա-տացեալ մարդիկ ուզում են իրենց մտատանջութիւնը հանգչեցնել Յիսուսի թեւերի մէջ, բայց Յովսէփ Արեմաթացու պարագային ճիշտ հակառակը պատահեց: Յիսուսն իր գլուխը հանգչեցրեց նրա բազուկների մէջ եւ դա մեծ երանութիւն էր այս պարզ մահկանացուի համար»:



Գերապ. Հայր Սուրբն իր խօսքի շարունակութեան մէջ Քրիստոսի մարմինը խաչից ցած իշեցնելու եւ իր ընտանեկան դամբարանի մէջ թաղելու կապակցութեամբ Արեմաթացու արարքը կարեւութիւն անանելով, յորդորեց այսօրայ պայմաններում կարեւութիւն ցուցաբերել աղքատի եւ զրկեալի նկատմամբ: Նա նշելով, որ Հայաստանը, Արցախը, Զաւախը եւ սիրահայութիւնը այսօր նոյնպէս մեր կարեւութեան կարիքն են զգում, այսպէս շարունակեց. «Սիրելի՛ Հաւատացեալներ, կեանքը մէկ ուղղութեամբ չի գնում: Անակնկալ-



ները միայն մէկ ժողովրդի համար չեն պատահում: Դրանք տեղափոխում են՝ ինչպէս հիւանդութիւնը, որը մարդու մարմնի մէջ մէկ տեղ չի մնում: Այսօր աշխարհի մէկ անկիւնում պատահած դժբախտութիւնը, վաղը կարող է մեզ հասնել: Եւ այս ժամանակ մեր ժողովուրդն իր եղբայրական ձեռքը երկարելով մէկը միւսին՝ պէտք է ոսկէ կամուրջ ստեղծի, որպէսզի կարեկցութիւն ցուցաբերի»:

Ս. Պատարագի աւարտին տեղի ունեցաւ Զրորինեք՝ Ս. Յովսէփ Արեմաթացու աջ-մասունքով եւ Շերկայ հաւատացեալներն ստացան օրինած շրից: Ապա Ս.Ս. Վանքի շրջափակում, զանգակատանը կից բարերարների եւ հոգեւորականների շիրմաքարների վրայ կատարեց Հոգեհանգըստեան արարողութիւն՝ Ս. Ամենափրկչեան Վանքում ծառայած եկեղեցական եւ աշխարհական բոլոր սպասարուների ու բարերարների հոգիների խաղաղութեան համար:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ, տօնի հանդիսութեան կազմակերպիչ յանձնախումբը Ս.Ս. Վանքի բակում կազմակերպել էր գեղարեսական ծեռնարկ: Նախ օրիայ հանդիսավար Նայիրի Թահմազեանը շնորհաւորելով առիթի կապակցութեամբ, ամփոփ բացատրական ներկայացրեց Ս. Ամենափրկչեան Վանքի եւ Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցու շինութեան կապակցութեամբ: Այնուհետեւ որպէս գեղարեսատական կատարումների սկիզբ՝ «Մայրիկն այսօր ուշացել է» երգի կատարմամբ Շերկաներին հիացրեց փոքրիկ Նա-

րինէ Խուդաբախչեանը, որից յետոյ Վեհանուշ Խուդաբախչեանն ասմունքեց «Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում» բանաստեղծութիւնը:



Ծրագրի շարունակութեան մէջ Ալիս Յովսէփեանը մենակատարեց «Եարը մարդուն եարայ կրուտայ» երգը, Վանէ Թահմազեանը ասմունքեց «Գրագիւտ» բանաստեղծութիւնը, իսկ Մարտիկ Յովհաննիսեանը կատարեց «Հզօր Հայաստան» երգը:



Որպէս գեղարեսատական բաժնի եզրափակիչ ելութ «Կոմիտաս» երիտասարդական երգչախումբը կատարեց «Տաս միլիոն հայ ենք» երգը եւ «Ժողովրդական երգերի շարան»-ը:

Զարկ է նշել, որ գեղարեսատական այս կատարումներն իրակա-

նացել էին ղեկավարութեամբ հոգշ. Տ. Աճանիա վրդ. Գուճանեանի, Ն.Զ. Հայութեաց Բարեգործական Ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի ղեկավար դոկտ. Սիլիա Ալլահվերդեանի եւ «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի խմբավար Արմեն Ամիրխանեանի:



Որպէս փակման խօսք, թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանն իր հայրական օրինանքը փոխանցեց Եերկաներին: Նա Ա. Ամենափրկչեան Վանքի տօնը բոլորի տօնն անանելով, ասաց. «Եկեղեցին հայի միջնաբերդն է: Եկեղեցին հայ ժողովրդի յաւերժութեան խորհրդանիշն է: Եկեղեցին Աստծու տունն է, Հրեշտակների բնակարանը, արդարների հանգստավայրը, մեղաւորների քաւարանը եւ Քրիստոսի արքայարանը»: Սրբազն Հայրն անդրադառնորդ նաև Թեմի ժամանակի առաջնորդ Խաչատուր վրդ. Կեսարացուն, որը 17-րդ դարի առաջին կէսին Վաճռում հիմնադրեց Իրանի եւ Միջին Արեւելքի առաջին տպարանը, ասաց. «Ա. Ամենափրկչեան Վանքը նման առաջնորդներ, կաթողի-

կուներ, ագուայիններ եւ գիտնականներ է տւել ազգին, որոնց մենք պէտք է յիշենք: Սակայն, պէտք է ողջունենք նաև բոլոր նրանց, ովքեր այսօր շարունակում են աշխատել ու ստեղծագործել ազգի համար եւ պահել այս բոլոր արժէքներն ու սրբութիւնները: Մենք չպէտք է միայն հպարտանանք անցեալով, այլ պէտք է մտածենք, թէ ինչ նորութիւններ ենք կարող աւելացնել եղածի վրայ»:



Գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանն իր խօսքի աւարտին նեկաներին յայտնեց, թէ հայ գրքի տպագրութեան 500-ամեակի առիթով, Ա. Ամենափրկչեան Վանքի թանգարանն անանակոչւելու է Խաչատուր վրդ. Կեսարացու անամբ:



Միջոցաւման աւարտին թանգարանի մուտքի մօտ տեղի ունեցաւ պաշտօնական արարողութիւն: Թեմակալ Առաջնորդ Սրբազն Հօր նախագահութեամբ եւ Թեմական Խորհրդի առաջարկով, ինչպէս նաև Պատգամաւրական Ժողովի Դիւանի ու Կրօնական Խորհրդի հաւանութեամբ, Նոր Զուղայի Ազգային Առաջնորդարանի թանգարանը, որը մինչ այժմ նշում էր «Ա. Ամենափրկչեան Վանքի թանգարան», անանեց «Խաչատուր Կեսարացի Թանգարան»:

Սոյն անանումը, նիրելով հայ գրքի տպագրութեան 500-ամեակին, նպատակ ունի յաւերժացնելու Միջին Արեւելքի առաջին տպարանի հիմնադրի Խաչատուր վարդապետ Կեսարացու արժանայիշաւակ անունը:

ՎԵՃՆՈՒՐԱՑ ԱԶՎԱԾՈՐԴԻ ՍՈՒՐԵՆ ՑՎԿՈՐԵՎԱՆԻ ՅՈՒՆԵՐԾ ՎՐՏՎԱԾՈԼՈՂ «Ո՞Վ Է ՄՊԱԼՈՒՄԿԱՉԱՂԱԿՆԵՐԻՆ» ԳՐԲԻ ՇՆՈՐՀԱՎԱԾՈՒՄԸ ՆՈՐ ԶՈՒՂՑՈՒՄ

Անձնուրաց ազատորդի Սուրէն Յակոբեանը ծննել է 1965 թվականի սեպտեմբերին: Նա Իրաք-Իրան պարտադրեալ պատերազմի տարիներին՝ 1986 թվականին, մեկնել է զինուրական ծառայութեան եւ ծառայութեան վերջին օրերին գերեվարւելով թշնամու կողմից, շուրջ 26 ամիս քաջութեամբ դիմացել է կտուանքներին ու գերութեան ցաւին եւ ի վերջոյ ազատել ու տուն է վերադարձել 1990 թվականի սեպտեմբերին:



Սուրէն Յակոբեանն իր յուշերն արտացոլելու եւ յաւերժացնելու նախատակով, նախաձեռնել է պարսկերէն լեզուվ հրատարկել «Ո՞վ է սպանում կաշաղակներին» գիրքը, որտեղ առկա են պատերազմի ժամանակաշրջանին առնչող բազմաթիւ յուղիչ յուշեր: Գրքում տեղ են գտել նաև հայ նահատակներ Վրէժ Բաղումեանի, Վարդան Աբրահամեանի եւ Ռազմոնդ Բաղրամեանի հակիրճ կենսագրականներն ու նրանց կեանքի տարբեր հանգրւաններից հետաքրքիր յուշեր: Սոյն գիրքը գրի է առնել Հոչար Շահմոհամմադիի գրչուվ՝ Սուրէն Յակոբեանի պատմածների հիման վրայ:

«Ո՞վ է սպանում կաշաղակներին» գրքի շնորհանդեսը տեղի ունեցաւ չորեքշաբթի, սեպտեմբերի 26-ի երեկոյեան, Նոր Զուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում՝ Սպահանի Հայոց Թեմական Խորհրդի եւ Սպահանի Արևեսի գրասենեակի նախատեղ նախաձեռնութեամբ:

Պարսկէ հրահրեալների ներկայութեան բերումով բոլոր ելոյթները կատարւեցին պարսկերէն լեզուվ: Միջոցառումը բացւած յայտարարւեց Իրանի Իսլամական Հանրապետութեան օրիներգի յունկայս ու մենդրութեամբ: Այնուհետեւ օրիայ հաղորդավարը հանդէս եկաւ ողջոյնի ու բարիգալստեան խօսքով, որից յետոյ ելոյթ ունեցաւ Սպահան նախանդի Արևեսի գրասենեակի նախագահ արն. Սայեդաննիան: Նա գնահատելով նախաձեռնութիւնը, արտայալուց, որ գորոշները եւ պատմագիրները պէտք է գրի

առնեն ու յաւերժացնեն մեր անցեալը եւ պատերազմի շրջանի սիրագործութիւնները՝ գալիք սերունդներին մատուցելու համար: Պրն. Սայեդաննիան իր խօսքի շարունակութեան մէջ, յիշելով հայորդիների քաջագործութիւնները Իրաք-Իրան պարտադրեալ պատերազմի ժամանակաշրջանում, այսպէս աւելացրեց. «Իրանահայութիւնը, ի մասնաւորի Սպահանի Հայութիւնը, յեղափոխութեան եւ պատերազմի տարիներին դերակատար ներկայութիւն են ցուցաբերել եւ առանց որեւէ ակնկալիքի աշխատել են հայրենքի պաշտպանութեան հաւատով»:



Ելոյթների շարանում հանդէս եկաւ նաև Իրանի Խաղաղական Ազգային հրամականութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը: Նա շնորհաւորելով անձնուրաց Սուրէն Յակոբեանին եւ արն. Շահմոհամմադիին՝ գրքի հրատարակման կապակցութեամբ, աւելացրեց. «Գրքում տեղ գտած իւրաքանչիւր յուշ, ոչ միայն դերակատար է պատմութեան կառուցման մէջ, այլև դրանից բուրող եղբայրութիւնը միացնում է մեր սրտերը: Սակայն չպէտք է մոռանանք, որ այս բոլորի գինը եղել են այն տառապանքները, որոնց իր հաստատուն հաւատով դիմացել է Սուրէնը»:



Պրճ. պատգամաւորն իր խօսքի աւարտին ասաց. «Թող համայն աշխարհն իմանայ, որ այս ժամանակներում երր, որոշ անհատներ անյարդալից մօտեցումներ են ցուցաբերում իսլամի սրբութիւնների նկատմամբ, իրանում քրիստոնեաները եւ կրօնական այլ փոքրամասութիւնները ոչ միայն յարգանքով են յիշւում, այլեւ պահպանում է նրանց մշակութային ժառանգութիւնը եւ մեծարւում է նրանցից իւրաքանչիւրը, ով այս երկրի բարգաւաճման ուղղութեամբ աշխատանք է տարել եւ անձնազօհութիւն է կատարել»:

Այնուհետեւ Ռոբերտ Բեգլարեանի ելոյթին յաջորդեց Սպահանի գաւառապետ պրճ. Քաֆիլի խօսքը: Նա նշելով, թէ պաշտպանութիւնն է սրբազան դարձրել մեր պատերազմը եւ Իրանը երբեք պատերազմ վիճուրող երկիր չի եղել, աւելացրեց. «Իսլամական Յեղափոխութիւնից յետոյ, մեր երկիրն ու մեր արժէքները թշնամու յարձակումների թիրախ դարձան, եւ մեր սիրելի ժողովուրդը լինելով տարրեր ազգութիւններից, պաշտապանեց եւ դիմաղրեց»: Վերջում գաւառապետն անձնուրաց Սուլեյ Զակորեանին Աստծու ճանապարհի մարտիկ անաւելով՝ իր խօսքն այսպէս աւարտեց. «Այս օրերի մեծարմամբ՝ մեծարում ենք նաև արժէքները եւ բարոյականութիւնը»:



Ծրագրի շարունակութեան մէջ, թեմակալ առաջնորդ գերշ. S. Բաբգէն եպս. Զարեանի խօսքն ընթերցեց արժն. S. Վարդան քին. Աղաբաբյանը, որտեղ ողջունեց ազատորդի Սուլեյ Զակորեանի եւ պրճ. Շահմոհամնադիի կատարած համատեղ աշխատանքը: Սրբազան Հայրն իր խօսքում խստօրէն դատապարտելով իսլամ կրօնի նկատմամբ կիրառուած անյարդալից մօտեցումները, անդրադարձել էր Իրաք-Իրան պարտադրեալ պատերազմին եւ ասաց. «Պարտադրեալ պատերազմի տարիներին Իրանի ժողովուրդն անկախ հաւատախց ու ազգութիւնից, ձեռքձեռքի տւեց եւ փաստեց, որ ընդհանրական շահերի եւ երկրի հողային ամրողականութեան համար կարող է միասնաբար մարտնչել երեւելի եւ աներեւոյթ թշնամիների առջեւ: Իրանահայութիւնն իր մտաւո-

րականներով, զինւորականներով ու արհեստաւորներով մասնակցեց սրբազան պաշտպանութեանը եւ իր միւս հայրենակիցների հետ միակամ սիրազործութիւններ կատարեց, պատերազմեց ու իր արեամբ պաշտպանեց երկիրը»:



Այնուհետեւ, որպէս եզրափակիչ ելոյթ, բեմը տրամադրեց գրքի կազմող Հոջաթ Շահմոհամմադիին: Պրճ. Շահմոհամմադին սրբազան պաշտպանութիւնը իւրայատուկ պաշտպանութիւն անաւելով՝ կարեւորութեամբ ընդգծեց. «Իրաք-Իրան պարտադրալ պատերազմը մեր պատերազմը չէր. դա մի սրբազան պաշտպանութիւն էր մեր երկրի հողային ամրողականութիւնից, գաղափարներից ու իդեալներից»: Նա անդրադառնալով իրանական բանակի



տարբեր բաժինների եւ ի մասնաւորի Իրանի ժողովրդի ակտիւ մասնակցութեանը պարտադրեալ պատերազմին՝ այսպէս շարունակեց. «Իրանի ժողովուրդը, ծովի ալիքի նման, սկսած երկրի ամենահիւսիսային հաստածից, շարժւեց դէպի հարաւային ճակատներ՝ մասնակցելու սրբազան պաշտպանութեանը եւ այդ պատճառով մենք չենք կարող ասել, որ արձանագրուած արդիւնքներն եղել են որեւէ յատուկ խմբի

Շարունակութիւն՝ 17-րդ էջում

ԴՊՐՈՑՎԱԿԱՆ ՏԱՐԵՄՈՒՏԻ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՎԵՐՈՒՄ

Չարբաք՝ 2012 թւականի սեպտեմբերի 22-ի առաւտեան հանդիսաւոր արարողութեամբ հնչեց դպրոցական տարեմուտի առաջին զանգը՝ Նոր Զուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրում, որով նոր եռանդով ու խանդավառութեամբ սկսւեց 2012-2013 ուսումնական տարին:



Տարեմուտի այս արարողութեանը ներկայ էին արժն. Տեսարու քինց. Գալստանեանը, Իրանի Խւլամական Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր պրն. Ռոբերտ Բեգլարեանը, Սպահանի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովի Դիւանի, Թեմական, Կրօնական եւ Կրթական խորհուրդների ներկայացուցիչները, Սպահան քաղաքի Ուսումնա-դաստիարակչութեան հիմնարկի 3-րդ շրջանի փոխտնօրինութեանը՝ պրնց. Իռաւանին ու Սաֆանին, դպրոցների աշխատակազմերը եւ ծնողները: Խոկ առանձին շարքերով դպրոցի բակում համախմբվել էին նաև «Արմէն» տարրական համալիրի, «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների աշակերտ-աշակերտութիւնները:



Հանդիսութիւնն սկսւեց «Կատարինեան» դպրոցի փոխտնօսուց պրն. Արթին Մուրադեանի շնորհաւորանքի խօսքով, որին յաջորդեցին Կրթական Խորհրդի ատենապետ պրն. Զանսոն Աղաբարայեանի պարսկերէն եւ հայերէն լեզուներով ելոյթները: Նա շնորհաւորելով առիթի կապակցութեամբ, յորդորա-

կան խօսք ուղղեց ուսուցիչներին ու աշակերտութեանը, իսկ իր պարսկերէն ելոյթում կարեւորութեամբ անդրադարձաւ կրթա-դաստիարակչութեան համակարգի եւ ի մասնութի ուսուցիչների առաքելութեանը՝ մարդակերտման առնչութեամբ, միաժամանակ զուգահեռներ գծելով ուսուցիչների եւ մարդարէների իրագործած աշխատանքների միջեւ:

Վերամուտի առիթով արտապայտութիւններ եղան նաև «Կատարինեան» դպրոցի նորանշանակ տեսուց պրն. Ադիբիի եւ Սպահան քաղաքի Ուսումնա-դաստիարակչութեան հիմնարկի 3-րդ շրջանի փոխտնօրին պրն. Սաֆառի կողմից:



Որպէս եզրափակիչ ելոյթ, իր պատգամը փոխանցեց արժն. Տեսարու քինց. Գալստանեանը, աշակերտներին յորդորելով լինել համեստ ու խոնարի, ունենալ ամուր հաւատ եւ շանասիրաբար սերտել մայրենի լեզուն: Հանդիսութեան աւարտին հնչեց Տէրունական Աղօթքը:



Վերջում ուսումնական տարեշրջանի առաջին զանգը հնչեց Քահանայ Հօր եւ Կրթական Խորհրդի ատենապետի միջոցով:


Այնուհետեւ ազգային մարմինների ներկայացուիչներից կազմած պատկրակութիւնն անցաւ Կրթահամալիրին կից դպրոց՝ Նոր Զուղայի Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարան, որտեղ մանկական երաժշտութեան ներքոյ գոյնզգոյն փուչիկնե-

Շարունակութիւն՝ 27-րդ էջում

ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՅԱՎՈՂՈՒԹԻՒՆԸ

«ՄԱՅՐԵՆԻԻ ԼԱՒԳՈՅ ՈՒՍՈՒՑԻՉ» ՄՐՑՈՅԹ

ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱԸՆԹԱՑՆԵՐԻՆ



Հայաստանի Հանրապետութեան Սփիտքի Նախարարութեան եւ Համաշխարհային Հայկական Կոնֆեռնի համատեղ նախաձեռնութեամբ «Հայապահապնութեան գործում ունեցած նշանակալի աւանդի համար» համահայկական ամենամեայ մրցանակաբաշխութեան շրջագծում, 2011 թականին կազմակերպեց «Մայրենիի լաւագոյն ուսուցիչ» մրցոյթը, որի «Ամենօրեայ հայկական կրթօջախի մայրենիի լաւագոյն ուսուցիչ» անանակարգով բաժնին իրենց մասնակցութիւնը բերեցին նոր Զուղայի հայոց ազգային դպրոցների ուսուցիչներից հինգ հոգի:

Այս մրցոյթը կազմակերպել էր՝ նպատակ ունենալով խրախուսելու Սփիտքում հայ ազգային ինքնութեան, մայրենի լեզվի պահպանման, զարգացման եւ տարածման, հայ սերնդի հայեցի կրթութեան եւ դաստիարակութեան գործում աւանդ ունեցող ուսուցիչներին եւ տարածել նրանց մանակավարժական եւ մասնագիտական փորձը՝ Սփիտքում:

Մրցոյթին մասնակցող նոր Զուղայի հինգ ուսուցիչները, յայտարարած ժամանակահատածում իրենց մասնակցութեան յայտը՝ համապատասխան տեսալներով ուղարկեցին ՀՀ Սփիտքի Նախարարութիւն եւ արդիւնքում բոլոր հինգ մասնակիցներն արժանանալով բացառիկ յաջողութիւնների՝ պարգեւատրութիւն համապատասխան դիպլոմներով ու մրցանակներով, որը հապարտանալու առիթ է Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի, հայոց ազգային դպրոցների եւ համայնքի անդամների համար:

Ստորեւ ներկայացնում ենք մրցանակակիր ուսուցիչներին.

* Հայոց Ազգային Նախակրթարանի ուսուցչուիի տկն. Ռայա Խուդավերդեան եւ «ԱրմԷն» տարրական համալիրի ուսուցչուիիներ՝ տկնքը. Արմինէ Սիմոնեան ու Միգանուշ Տէր-Մարտիրոսեան՝ առաջին կարգ

* «ԱրմԷն» տարրական համալիրի ուսուցչուիի

տկն. Անահիտ Կիրակոսեան եւ «Քանանեան» աղջուղեցոյց եւ միջնակարգ դպրոցի ուսուչուիի տկն. Սեւան Դիլանչեան՝ երկրորդ կարգ

Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդութը շնորհաւորելով վերոնշեալ ուսուցիչներին եւ հայոց ազգային դպրոցների անձնակազմին՝ հապարտացուցիչ յաջողութեան կապակցութեամբ, բարձր է գնահատում Թեմի հայ ուսուցիչների կատարած նիրական աշխատանքը՝ նորանոր յաջողութիւններ մաղթելով նրանց կեանքի բոլոր ասպարէզներում, իրենց նիրական ու անփոխարինելի աշխատանքում եւ հայ աշակերտին հայեցի կրթելու եւ ազգային արժեքների ոգով դաստիարակելու սրբազն գործում:

Այս տարի, նախաձեռնութեամբ ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան, յուլիսի 10-ից մինչեւ օգոստոսի 6-ը կայացաւ արտասահմանեան երկրներում գործող հայկական վարժարաններում, դպրոցներում, մանկապարտէզներում, մէկօրեայ եւ այլ տեսակի կրթօջախներում տնօրէնների ու հայագիտական առարկաներ դասաւանդող ուսուցիչների վերապատրաստման մէկամսեայ ծրագիրը, որին Սպահանի Հայոց Թեմից մասնակցել էր նոր Զուղայի Հայոց Ազգային Նախակրթարանի ուսուցչուիի Ռայա Խուդավերդեանը: Վերապատրաստումն ընթացել է Երեւանում, նախարարութեան կողմից հաստատած ծրագրով: Ուսուցչուիի Ռայա Խուդավերդեանը մէկամսեայ ծրագրի աւարտին, շուրջ 120 ժամ ներկայ գտնւելով մանկապարտէզի դաստիարակների եւ նախակրթարանի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին, ստացել է համապատասխան վկայագիր եւ ուսումնա-մեթոդական բազմաթիւ հիւթեր:

**Սպահանի Հայոց Թեմի
Կրթական Խորհրդ**

**ԳԵՐԱՄԱՆԱՅԻ
ԿՐՈՆԱԿԱՎ
ԳՈՐԾԻՉՆԵՐ Ս.
ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ
ՎԱՆՔՈՒՄ**

2012 թւականի հոկտեմբերի 30-ի առաւտեան ժամը 11:00-ին, Ս. Ամենափրկչեան Վանքը հիմքնեկալեց Գերմանիայի բողոքական եկեղեցու մի շարք եկեղեցականների, քարոզիչների, կրօնի ուսուցիչների եւ եկեղեցու գործունեայ անձանց մի խմբի, ովքեր իրանում ապրող կրօնական փոքրամասութիւնների կենցաղային իրավիճակի մասին տեղեկութիւններ ստանալու եւ ճշգրիտ պատկերացումներ կազմելու նպատակով, նախապէս առաջնորդ Սրբազն Հօրը հանդիպելու դիմում էին ներկայացրել:

Այցելուները Ս. Ամենափրկչեան Վանքի Ս. Ցովսէփ Արեմաթացի եկեղեցի ացեղելուց յետոյ, Ծալկեայ դահլիճում ներկայացան Սպահանի Հայոց Թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանին: Հանդիպման սկզբում առաջնորդ Սրբազն Հայոն ընդհանուր ծանօ-

թութիւն փոխանցեց Սպահանի Հայոց Թեմի մասին, ապա պատասխանեց խմբի անդամների զանազան հարցումներին՝ հայ համայնքին առնչող հասարակական, ընկերային, կրօնական եւ եկեղեցական մի շարք խնդիրների վերաբերեալ:



Հանդիպման աւարտին գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը «Պահպանիչ» աղօթք արտասանելով, բարի երթ եւ տունդարձ մաղթեց խմբին, որը բաւարարութիւն ստանալուց եւ առաջնորդ Սրբազն Հօր հետ լրսանկարելուց յետոյ, այցելեց Ս.Ս. Վանքի Խաչատուր Կեսարացի թանգարանը, որից յետոյ շարունակեցին իրենց շրջագայութիւնը դէպի Իրանի այլ քաղաքներ:

Շարունակութիւն 14-րդ էջից

ՎՆՉՏՈՒՐՎՅ ԱԶՎՑՈՐՔ ՍՊԻՐԵՆ ՑԱՎՈՐԵՑՆԻ...

ՃՆՈՐՀԻՒ, ՔԱՆԻ ՈՐ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՐՐԵՐ ԽԱԼԵՐՆ ԻՐԵՆԳ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԴԵՐԱԿԱՍՏԱՐ ԵՆ Եղել այս գործում»: Պին. Շահմոհամմադին Շշելով, որ եղել են հայ հրամանատարներ, ովքեր պատերազմի տարիներին մեծ դերակատարութիւն են ունեցել ուազմական տարբեր գործողութիւնների մէջ, բեմ հրաիրեց ուազմական ուղղաթիռների օդաչու հանգստի կոչւած դերգօրավար Արտեմ Մելիքեանին՝ առիթի առնչութեամբ արտայայտելու:

Դերգօրավար Մելիքեանի հետաքրքիր յուշերից յետոյ, պին. Շահմոհամմադին բեմ հրաիրեց անձնուրաց ազատորդի Սուլթէն Յակոբեանին եւ իր կնօշը, որոնց ներկայութեամբ գրողը փորձեց գրի մի քանի յուզիշ հաւածների ընթերցմամբ ներկաներին փոխանցել հերոսի ապրումների մի բաժինը:

Վերջում, ծեռամբ առաջնորդ Սրբազն Հօր, պատգամատոր Ռոբերտ Բեգլարեանի, Թեմական Խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանի, Սպահանի գաւառապետ պին. Քաֆիլի, Սպահան նահանգի Արևստի գրասենեակի նախագահ պին. Սայեդաննիայի եւ Սրբազն Պաշտպանութեան Արժեքների ու Հրատարակութիւնների Պահպանման Հիմնադրամի նախագահ դերգօրավար Մուսալիի, կատարեց գրի շնորհանդէսը, որից յետոյ պինք. Քաֆիլի եւ Սայեդաննիայի կողմից պատույ գրեր, իսկ Թեմական Խորհրդի անունից յուշանէրներ յանձնեցին պինք. Սուլթէն Յակոբեանին եւ Շահմոհամմադին: Թեմական Խորհրդի կողմից յուշանէր յանձնեց նաեւ պին. Սայեդաննիային:

Նշենք, որ երեկոյի ընթացքում հաղորդավարի միջոցով ընթերցւեց նաեւ հայ նահատակներ Վրէժ Բաղումեանի, Վարդան Աբրահամեանի եւ Ռայմոնդ Բաղրամեանի կենսագրականներից հատուածներ:

ԶԱԻԱԽՈԲԻՆ ՆԻՒՐԻԱԾ ԱԶԳԱՅԻՆ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ 4-ՐԴ ՄՐՑՈՅԹ-ՓԱՌԱՏՈՆԸ՝ ՆՈՐ-ԶՈՒՂԱՅՈՒՄ

2012 թւականի հոկտեմբերի 25-ին եւ 26-ին, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում, ճախաձեռնութեամբ շրջանի Հայ Դատի «Արձագանք» Քարոզչական Յանձնախմբի, տեղի ունեցած Զաւախքին նվիրած ազգային-լեղափոխական երգերի 4-րդ մրցոյթ-փառատօնը, ուր Թեմի հարիւրաւոր հայորդիներ ներկայացել էին դիտելու Նոր Զուղայի եւ Շահինշահրի 11 մասնակիցների ելոյթները:



Միջոցառման երկու օրերի բացումը կատարւեց Զաւախքին նվիրած մրցոյթ-փառատօնների համար պատարաստած հիմնով՝ հոգ. Տ. Անանիա Վոդ. Գումանեանի կատարմամբ: Սոյն հիմնի խօսքի եւ երաժշտութեան հեղինակը նոյնպէս հոգ. Հայր Սուրբն է, իսկ երաժշտական գործիքաւորումը կատարւել է Հարմա Կարապետեանի միջոցով: Հիմնի հնչելուց յետոյ, պաստահ վրայ ցուցադրւեց սեսանիւթ, որը ծաղկաքաղ էր նախորդ երեք մրցոյթ-փառատօններից:



Երկօրեայ այս ծրագրի հաղորդավարութիւնը վստահած էր Արթին Մուրադեանին:

Հարկ է նշել, որ 11 ելոյթների հերթականութիւնը փառատօնին նախորդող օրը ճշտւել էր վիճակահանութեամբ՝ մասնակիցների ներ-

կայառութեամբ, որի արդիւնքում առաջին օրը ելոյթ ունեցան վեց, իսկ երկրորդ օրը՝ հինգ երգիշ-երգչուիրիներ:



Մրցոյթ-փառատօնի ելոյթների գնահատման դժւարին աշխատանքն ստանձնել էին երգ-երաժշտութեան ասպարեզում իրանահայ երեք մասնագէտներ՝ վաստակաւոր երգչուիի և վոկալի ուսուցիչ Օֆիկ Մելիքեանը (Մատթէոսեան), Երեւանի Կոմիտասի անաւան պետական կոնսերվատորիայի ջազ-էստրադային բաժնի մագիստրոսի աստիճանով շրջանաւարտ, երգիչ ու երաժշտութեան ուսուցիչ՝ Արմէն Ասատրեանը եւ յեղափոխական երգերի մենակատար Արթին Քեշիշեանը: Իրաւարար կազմը, իրաքանչիւր ելոյթից յետոյ, իր տեսակէտն էր յայտնում կատարման դրական եւ բացասական կողմերի կապակցութեամբ, որից յետոյ իր գնահատականներն էր տալիս երգի ճիշտ կատարումը, առողանութիւնն ու բեմային կեցւածքը նկատի առնելով:

Աւանդոյթի համաձայն, հինգաբթի՝ հիկունմբերի 25-ի երեկոյեան, միջոցառման բացումից յետոյ, բեմը տրամադրւեց նախորդ մրցոյթ-փառատօնի յաղթող Վեհանուշ Աւետումեանին, ով կատարեց 3-րդ մրցոյթ-փառատօնի յաղթած «Ով Հայ» երգը: Այնուհետեւ հերթաբար ելոյթ ունեցան վեց մասնակիցներ: Իսկ ծրագրի ընթացքում ընդմիջելով մրցութային բաժինը՝ «Հայ կամաւո-

Աեր» երգի կատարմամբ ներկաներին ոգեշնչեց նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի Էստրադային խմբի անդամ եւ Զաւախրին ներւած ազգային-եղափոխական երգերի 2-րդ մրցոյթ-փառատօնի յաղթող՝ Ալիս Յովսէկիեանը:



Սոորեւ ներկայացնում ենք առաջին օրու մասնակիցների անուն-ները, կտարած երգերն ու ընդհանուր 30 նիշից ստացած գնահատակները:

- Նորվան Աղախանեան, Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան կողմից, «Փառք Դաշնակցութեան», 23 նիշ:
- Նոռա Աղախանեան, Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան կողմից, «Նարօս» երգչախմբի անդամ, «Ով Հայ», 21 նիշ:
- Արութին Հախնազարեան, Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Շահինշահրի Մասնաճիւղի Մշակութային Միաւորի Վարչութեան կողմից, «Զինորի երգը», 24 նիշ:
- Անդրէ Խաչատրեան, Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան կողմից, «Նարօս» երգչախմբի անդամ, «Երգ կամաւորի», 26 նիշ:
- Մարտիկ Յովհաննիսեան, Աքօ Աշճեանին ներւած երգը, 28 նիշ:
- Թամիա Մինասեան, «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի անդամ, «Նոր Հայաստան», 29 նիշ:



Հարկ է նշել, որ իրաքանչիւր ելոյթից առաջ, պաստառտի վրայ ցուցադրում էին կատարողի տուեալները, իսկ ելոյթից յետոյ, երգիշ-

մերը պատասխանում էին հաղորդավարի ուղղաձ հարցերին:

Ուրբաթ՝ հոկտեմբերի 26-ի երեկոյան, բացման արարողութիւնից յետոյ, թեմը տրամադրւեց Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի Էստրադային խմբի անդամ եւ առաջին մրցոյթ-փառատօնի յաղթող՝ Նայիրի Ղազարեանին, ով ներկաներին ոգեշնչեց «Երեւան» երգի կատարմամբ, իսկ ծրագրի ընթացքում մրցութային բաժինն ընդմիջւեց Մշակութային Միաւորի Էստրադային խմբի միևնույն մասնակից Աղուրեանի «Հայաստան» երգի գեղեցիկ կատարմամբ:



Երկրորդ օրու կատարողների երգերի անուններն ու նրանց գնահատակներն ըստ հետեւեալի են.

- Սարմէն Շահմիրզայեան, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Շահինշահրի Մասնաճիւղի Մշակութային Միաւորի Վարչութեան կողմից, որին ընկերակցում էին Արծրունի Թամիմազեանն ու Արթին Պողոսեանը՝ կենդանի նագակցութեամբ, «Կեանքի ճամբեքը», 28 նիշ:

- Թանգիկ Միրզախանեան, «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի անդամ, «Կոունկ, բարով դառնաս», 24 նիշ:

- Կարէն Խանարեան, Ն. Զ. Հայ Կանանց Գթութեան Միութեան հովանաւորութեամբ, «Լոեց», 28 նիշ:

- Արմէն Թորոսեան, «Զեռք տուր ընկեր իմ», 24 նիշ:

- Վանայ Շիրւանեան, «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի անդամ, «Հայաստան», 30 նիշ:



Երկու երեկոների ընթացքում 11 երգչ-երգչուհիների մրցակցութեան արդինքում Վանայ Շիրանեանը եւ Թանիա Միհասեանը յաջողեցին գրաւել հերթաբար առաջին եւ երկրորդ տեղերը: Իսկ, նկատի ունենալով, որ Սարմէն Չահմիրզայեանը, Կարէն Խանլարեանը եւ Մարտիկ Յովհաննիսեանն ստացել էին նոյն նիշը՝ 28-ը, իրաւարար կազմի առաջարկով, իրաքանչիւրն առանց երաժշտութեան, կատարեցին մի այլ երգ եւ արդինքում իրաւարաների որոշմամբ, որը նոյնպէս հանդիսատեսի բույն ցանկութիւնն էր, վերոնշեալ երեք մասնակիցները միասնաբար նւաճեցին երրորդ տեղը:



Մրցոյթ-փառատօնի երկրորդ օրն իր խօսքն արտավախտեց շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչ Վարուժ Մովսիսեանը, ով ողջունելով ներկաներին, Ծրագիրը որակեց այսպէս. «Ահա՛ մշակութակենարոն ու գիտակից ազգի չքնաղ եւ վայեռուչ դրսեւորում, յանուն հայրենի Զաւախքի եւ Զաւախքահայութեան հայօրէն ապրելու տենչանքին: Ազգային գիտակցութեան եւ պատասխանատւութեան հարազարարութեանը»: Նա իր խօսքի շարունակութեան մէջ ներկաներին բացատրելով շրջանի Հայ Դատի «Արձագանք» Քարոզական Յանձնախմբի միջոցով իրագործած Զաւախքին նիդրած միջոցառումների մասին, այսպէս աւարտեց. «Ողջունեի է մասնակցութիւնը պատկառելի թւով երիտ-պատանիների, ովքեր գիտակցելով պահու, թափուր չժողեցին բեմը, երբ աւագները եւ աւելի փորձառուները չկարողացան մասնակցել փառատօնին: Փա՛ռք մեր երիտասարդներին: Անհիմն չէ այն խօսքը, որ ասում է. «Ազգի պատ-

գան տեսնել պիտի երիտասարդութեան մէջ»: Մեր ապագան երաշխառութած է, անշո՛ւշտ»:

Չորրորդ մրցոյթ-փառատօնի աւարտին, ձեռամբ՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչ Վարուժ Մովսիսեանի եւ «Արձագանք» Քարոզական Յանձնախմբի պատասխանատու Զորիկ Յովսէփեանի, նախ մրցանակներ շնորհիւցին առաջին, երկրորդ եւ երրորդ կարգ հանդիսացողներին, եւ ապա գնահատգրութեր յանձնեցին միւս մասնակիցներին: Ընորհակալագրերով պարգևատրութեցին նաեւ իրաւարաները եւ կազմակերպական գործում յանձնախմբին օժանդակած միութիւններն ու անհատները:

Միջոցառումն աւարտին իր հայրական պատգամը ներկաներին փոխացեց առաջնորդ Սրբազն Հայրը: Նա իր խօսքում անդրադառնալով միասնականութեանը եւ միակամութեանը, ասաց. «Այսօր մեր մասնակցութեամբ սատար հանդիսացանք Զաւախքին եւ Զաւախքահայութեանը: Թող ժողովուրդների իրաւունքների պաշտպանութեան կազմակերպութիւններն իմանան, որ մենք կարող ենք պաշտպանել մեր իրաւունքներն ու տէր կանգնենք մեր պահանջատիրութեանը: Այսօր մեր կեցւածքով ապացուցեցինք, որ միասնականութիւնն ուժ է եւ որեւէ արգելք չի կարող սահմանել մեր պահանջատիրութիւնը: Եկէ՛ք միասնականութեամբ պահենք մեր հայրենիքը եւ քայլենք դէպի յաղթանակ»:

Իսկ աւանդոյթի համաձայն, որպէս երեկոյի եզրափակիչ փով, իր անզուգական կատրմամբ եւս մէկ անգամ ելոյթ ունեցաւ օրւայ յաղթող Վանայ Շիրանեանը:

Հարկ է նշել, որ մրցոյթ-փառատօնի երկու օրերին ներկայ էին գտնել նաեւ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր հովի հոգէ. Տ. Անանիա Վոդ. Գունանեանը եւ շրջանի Հայ Դատի Յանձնախմբի, Թեմի ազգային մարմինների ու միութիւնների ներկայացուցիչները:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱԸ
ՎԵՐԱՆԿԱԼԽԱՑՄԱՆ
21-ԱՄԵԱԿԸ
ՆՇԻԵՑ ՆՈՐ
ԶՈՒՂԱՅՈՒՄ**

Հովանաւորութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. S. Բարգէն եպս. Չարեանի եւ կազմակերպութեամբ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան, չորեքշաբթի՝ սեպտեմբերի 26-ի երեկոյեան, Միութեան կենտրոնատեղիում նշեց Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման 21-ամեակը:



Ծրագիրը նախագահում էր թեմակալ առաջնորդը, ներկայ էին քահանայից դասը, իրանի Խաղորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պանդամատր Ռոբերդ Բեգլարեանը, Թեմի Պատգամատրական ժողովի, Թեմական ու Կրօնական խորհուրդների, Միութեան Շահինշահրի Մասնաճիւլի, Ն.Զ. Հայ Դատի Յանձնախմբի եւ ազգային այլ մարմինների ներկայացուցիչներ, միութեանականներ եւ հոծ թուղ հայորդիներ:

Հանդիսութիւնը մեկնարկեց Միութեան Սկաուտական Միաւորի Արի-արենուշական հատւածի միջոցով իրականացած դրօշակի

արարողութեամբ եւ ՀՀ պետական հիմնի յունկայս ունկնդրութեամբ:



Բացման խօսքից յետոյ, օրիայ առթիւ ելոյթ ունեցաւ Նոր Զուղայի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչ պրն. Վարուժ Մովսիսեանը, որը շնորհաւորելով ՀՀ անկախութեան տօնը նշեց. «21-ամեայ Հայոց անկախ զոյգ հանրապետութիւնների համար գլխաւոր մարտահրաւելը, անշո՛ւշտ, Արցախի Հարցի Հայանպաստ կարգաւորումն է: Ոչ-պակաս կարեւոր մարտահրաւելներ են ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակն ու արտագաղթը, որոնք ժողովրդի մօտ առաջացրել են հիմաժամանակութիւն: 21 տարիների պետական փորձը բաւարար է համազգային նշանակութիւն ունեցող հարցերի լուծման համար, որոնք նոյն չափով խանգարում են մեր ժողովրդի բնականոն ընթացքը: Նշանակութիւնը եւ Հայ ժողովրդի մօտ ամրապնդւելու է պետականութիւնը եւ Հայ ժողովրդի մօտ ամրապնդւելու է անկախութեան գաղափարը»:

Ծրագրի ընթացքում ներկաները դիտեցին ՀՀ Սփիտքի նախարար Հրանուշ Յակոբեանի ուղերձի տեսագրութիւնը՝ ուղղուած Նոր Զուղայի հայ համայնքին, որում նախարարն իր ուրախութիւնն ու շնորհակալութիւնն էր յայտնել Նոր Զուղայի հայ համայնքի՝ Յաղթանակի տօնը նշելու կապակցութեամբ, եւ անդրադանալով Հայաստանի անկախութեանը, դրանից յետոյ Հայաստանում տիրող ծանր կացութեանը եւ այդ օրերում իրանի պետութեան ցուցաբերած օգնութեանը, մասնաւորա-

ահս նշել էր. «Իրանահայերն իրենց կեցւածքով եւ գործնէութեամբ, այնպիսի անուն եւ հեղինակութիւն էին ստեղծել, որ իրանի ժամանակի պետութիւնը լաւ հարեւանի կարգավիճակով, մեծ օգնութիւն ցուցաբերեց Հայաստանին: Իրանը դարձաւ շատ լաւ ճամբայ, որով մենք կարողացանք չնչել: Ծնորհակալ եմ Ձեզ, սիրելի՝ իրանահայեր, որովհետեւ մեծ է Ձեր դերակատարութիւնը, այս հարցում: Դուք ամենուր կաք, եւ դա մեզ ուրախացնում, յիացնում եւ հաւատացնում է, որ իրօք Հայրենիքը եւ Սփիւռքը միաձուլած՝ փորձում են կառուցել հզօր, ուժեղ եւ կարող Հայաստան: Մենք նաեւ ուզում ենք, որ դուք Հայաստանով միշտ հպարտ լինէք, հպարտ լինէք մեր հայրենիքով...»:



Ծնորհաւորանքի գրաւոր խօսք ներկայացրեցին նաեւ Հայ Ուս. Զահարմահալ Միութեան Նոր Զուղայի Մասնաճիւղի, Փերիոյ Կրթասիրաց Միութեան Կենտրոնական, Հայութեաց Բարեգործական Ընկերութեան եւ Հայ Կանանց Գթութեան (Կարմիր Խաչ) Միութեան վարչութիւնները:

Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ատենապետ պր. Նուէլ Մինասեանն եւս օրուայ առ-

թիւ շնորհաւորանքի խօսքերի կողքին ասաց. «Իւրաքանչյուր տարի, երբ նշում ենք անկախութեան տօնը յիշում ենք երեք կարեւոր կէտեր. ա) Մենք կարողացել ենք Հայաստանի անկախութիւնը նւաճել եւ միաժամանակ նւաճել ենք Հայ Դատի կարեւոր հանգրւանները. Արցախի Հանրապետութիւնն այսօր իրականութիւն է եւ սա 21 տարիների ընթացքում մեծ նւաճում է: բ) Մենք տեսանք, որ մեր թշնամիները՝

թուրքիան եւ Աղրբեջանը, շարունակում են իրենց դաւադրութիւնները, եւ իրենց ծրագրերին աւելի լայն մասշտապով եւ կազմակերպւած եղանակով են հետեւում: գ) Ապացուցւեց մեզ, որ անկախութեան հասնելը կարելի է դիւրին լինել քան անկախութիւնը եւ պետականութիւնը հզօր եւ պատշաճ մակարդակում պահելը»: «Պատի՛ Նոր Զուղայի ժողովրդին, որ 21 տարիների ընթացքում եւ զրանից առաջ անկախութեան գաղափարի պահպանողը դարձաւ եւ շարունակելու է պայքարել՝ ի խնդիր հայոց պետականութեան հզօրացման եւ համաշխարհային քաղաքական ու մարդկային կեանքում մեծ նւաճումներ ձեռք բերելու համար», - աւելացրեց պր. Մինասեանը:



Ելոյթների շարանում, Միութեան Կենտրոնական Վարչութեան ներկայացուցիչ Միգանուշ Տէր-Մարտիրոսեանն իր խօսքում ընդգծեց. «Ունենք եզակի հնարաւորութիւն, ըստ որի միջազգային բնտանիքի մաս ենք կազմում, եւ այն անհրաժեշտ է միշտ հունով օգտագործել՝ ընդհանրութեանը նպաստելով: Միջազգային ատեաններում միշտ քաղաքականութեամբ պէտք է խօսել Ցեղասպանութեան յատուցման եւ հողային տարածքի մասին: Անհրաժեշտ է մղել երիտասարդներին, որ ուսման ասպարէզում նւաճեն բարձրագոյնը, նպաստեն հայապահպանման գաղափարախօսութեան համար տարող պայքարին եւ դիւնագիտութեանը... Հաւատացած ենք,

որ կառչած մնալով մեր ազգային արժէքներին եւ գիտակցելով մղւող պայքարի կարեւորութիւնը, նպաստելու ենք վերանկախացաց Հայաստանի գոյութեանը, ջատագովն ենք դառնալու արդարութեան համար տարւող մարտի, որպէսզի վերջնականապէս հայի մարտունակ ու անկոտրուն կամքը թեւածի Մասիսի գագաթին ու ստեղծի ամբողջական Հայաստան՝ միատեղւած հայութեամբ»:



Այնուհետեւ խօսքը տրւեց օրերս Նոր Զուղայում գտնուող հանրայաց երգիծաբան եւ դերասան Վարդան Պետրոսեանին, ով շնորհաւորանքից յետոյ իր հումորային ելոյթով զարմալի տրամադրութիւն հաղորդեց հանդիսատեսին:



Ծրագրի գեղարևեստական բաժնն իրականացրեցին Միութեան

Մշակութային Միաւորի «Կոունկ» համոյթից Ալինա Տէր-Սուբիասեանը եւ Մանիա Ղուկասեանը՝ ասմունքելով Յուսիկ Արայի «Ազատութիւն» բանաստեղծութիւնը, ղեկավարութեամբ Ռիմա Սիմոնեամի, պարախումբը՝ «Նազանի» եւ «Երեւան» պարերով, պարուսոյց Նոնա Բախչեանի ղեկավարութեամբ, իսկ Զարեհնուշ Աղուրեանը «Հայունիք» եւ «Հայաստան գեղանի» հեղինակային երգերի կատարումով։



Բեմային ծրագրի աւարտին օրայ առթիւ իր պատգամը յեց գերշ. S. Բաբգէն եպս. Զարեանը՝ ասելով. «Բաւական չէ ազատ ու անկախ պետութիւն ունենալը. կարեւորն այն է, որ այս ազատութիւնը եւ անկախութիւնը պէտք է պահել՝ ազգային միակամ կեցւածքով, եւ միշտ մասնակից պիտի լինենք հայակերտման ու ազգակերտման աշխատանքներին, որպէսզի Հայաստանն իր բանակով, պետականութեամբ ու ամբողջ ժողովրդով զարգանայ ու հզորանայ եւ կարողանանք ունենալ ազատ, անկախ եւ ամբողջական Հայաստան»։

Հանդիսութիւնը, խրախնանքի տեսքով, շարունակւեց մինչեւ ուշ երեկոյ՝ «Անի» նագախմբի



Շարունակութիւն՝ 25-րդ էջում

**ՄՐԲՈՅ ԹԱՐԴՄԱՆՉԱՅ ԵՒ ՀԱՅ ՄԵԱԿՈՅԹԻ ՏԾՆԵՐԻ ԱՌԹԻՒ ԶԵՌՆԱՐԿ՝
ՆԻՒՐԱՇ ՍԱՅԱՐ ՆՈՎԱՅԻ ԾՆՆԴԵԱՆ 300-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՑՈՒՄ**

Նախաձեռնութեամբ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի Վարչութեան, շաբաթ՝ հոկտեմբերի 13-ի երեկոյեան Միութեան սրահում նշանակած Հայ Մշակոյթի եւ Ս. Թարգմանչաց Տօնը:



Զեռնարկը նիդրած էր Սայաթ Նովայի ծննդեան 300-ամեակին, որի բացման խօսքը ընթերցեց Միաւորի Գրական խմբի անդամ Գայիանէ Եղիազարեանը:

Օրոյ խորհրդի առթիւ բանախօսութեամբ հանդէս եկաւ Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարանի տեսչութիւն եւ Գրական խմբի անդամ Քառուլին Դիլանչեանը:



Բանախօսը նկատի ունենալով այն պարագան, որ ձեռնարկը նիդրած էր երգի մեծ վարպետ Սայաթ Նովային, փաստացի տւեալների հիման վրայ հանգամանօրէն բնութագրեց հայ երգի եւ երաժշտու-

թեան ստեղծման եւ նրանց զարգացման ու տարածման փուլերը եւ նշեց. «Պէտք է նկատի առնել նայեւ, որ մշակոյթի այն շերտը, որ պահպանել է մեր երաժշտական տիպային առանձնայատկութիւնները, դա մեր ժողովրդական ստեղծագործութիւններն են, որոնց հիման վրայ ստեղծւել են հետագայ երգ-երաժշտութիւնները»: Բանախօսն իր խօսքն աւարտեց Գարեգին Նժդեհի խոհերով։

Ծրագրի գեղարեստական բաժնում Մշակութային Միաւորի «Կոռունկ» ասմունքի եւ պարի համոյթը, ղեկավարութեամբ Ռիմա Սիմոնեանի եւ համագործակցութեամբ ասմունքի խմբի անդամ Կարին Տէր-Մարտիրոսեանի, հանդէս եկաւ Սայաթ Նովայի ստեղծագործութիւնների յաջող կատարումներով, եւ պարուսոյց նոնա Բախչեանի ղեկավարութեամբ պարագին գեղեցիկ համարներով։




Ասմունքողներն էին Մանիա Ղուկասեանը, Ալինա Տէր Սուքիասեանը եւ Լեռնիկ Ծատուրեանը, իսկ պարուիիները՝ Սիւնէ Ծահիշանեանը, Սոսէ Մինասեանը, Աճի Ասատրեանը, Վանէ Մինասեանը, Վահնէ Խսաղովեանը, Նարէ Ասատրեանը, Մարալ Յարութիւնեանը եւ Ալենիա Բաղրամեանը։ Սայաթ Նովայի եւ աշուղական այլ երգերով ելոյթ ունեցան Միաւորի երգեցիկ խմբից մենակատարներ Նայիրի Ղազարեանը եւ Լելիկ Խաչատրեանը, մայեստրո Արմէն Ամիրիսանեանի ղեկավարութեամբ։





Գեղարվեստական բաժինն ընդմիջում էր Նայիրի Թահիմազեանի միջոցով՝ Պարոյր Սեւակի գրչին պատկանող Սայաթ Նովայի մասին խոհերի ընթերցումներով:

Զեռնարկի եզրափակիչ բաժնում հայրական իր խօսքը փոխանցեց Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը: Արբազան Հայոց նախ ակնարկեց նոյն օրը առաջուեան Ս. Ամենափրկչեան Վանքի մայր եկեղեցում Ս. Թարգմանիչ Վարդապետների յիշատակին մատուցւած Ս. Պատարագին եւ Վանքի բակում կազմակրեպած ծրագրի ընթացքում աշակերտութեան ելոյթներին, ապա անդրադարձաւ հայ տառերի գիտին՝ ասելով. «Հայ ժողովուրդը, որպէս քաղաքակրթութիւն եւ մշակոյթ կերտող ազգ, ունի իր անկիւնադարձային եւ պատմական դէպքերը, որոնցից մէկը հայ տառերի գիւտն է»: Նա իր ուրախութիւնը յայտնեց Սայաթ Նովայի ծննդեան 300-ամեակին նկրած երեկոյի կազմակերպման առիթով եւ գնահատանքի խօսք ուղղեց բոլոր նրանց, որոնց շանքերի շնորհիւ իրականացել էր ձեռնարկը: Առանձնապէս գնահատեց գեղարվեստական բաժնի մասնակից երիտասարդ-ունիներին ու նեկավարներին եւ ասաց. «Եթէ ունենք այսպիսի երիտասարդներ, հայ մշակոյթը կապրի, կը զարգանայ եւ դէպի բարձրունք կառաջնորդէի: Եթէ այպիսի երիտասարդներ ունենք, Մեսրոպ Մաշտոցները, Սահակ Պարթևները, Ներսէս Շնորհայիները, Դաւիթ Անյաղմները մեր մէջ կապրեն, կը ներշնչեն եւ այդ ներշնչումով է, որ մեր գոյութիւնը կը պահպանենք»:



Ճարունակութիւն 23-րդ էջից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՎՈՒԹՅՈՒՆ...

Կենդանի կատարումներով:

Կազմակերպիչ Յանձնախումբը պատրաստել էր տեղեկատու, որը պատմականօրէն անդրադառնում էր ՀՀ անկախութեան կապակցութեամբ արձանագրած ձեռքբերումներին, նաեւ պարունակում էր Գարեգին Նժդեհի խօսքերից:

Ուտեստեղ Էների պատրաստման համար իրենց համագործակցութիւնն էին բերել Երէցների Միաւորի ամբողջ կազմը, Ակարչութեան կրպակի պատասխանատութիւնն ստանձնել էր Ուսանողական Միաւորը, իսկ սկասուները պատրաստել էին թելով հիւսած եռագոյն թեւնոցներ եւ բաժանել Միութիւն մուտք գործած անհատներին:

Նշելի է, որ միջոցառումն իրականացաւ Երէցների Միաւորի առաջարկով եւ Կերտրոնական Վարչութեան կողմից Երէցների, Մշակութային, Մարզական, Ակադեմիական, Ուսանողական միաւորների եւ կարգապահական կազմի ներկայացուցիչներից կեանքի կոչւած յանձնախմբի միատեղ համագործակցութեամբ:

«ԱՆԻԱՆԻ ԻՐԱՆԱՀԱՅԵՐ» ԶԵՄՈՆԴ ԲԱՆԱԽՈՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ ՄԾՎԱԿՈՅՑՈՒ ՏՕՆԻ ԱՌՋԻՒ

Նոր Զուղայում Հայ Մշակոյթի տոնին նիկրած ճենարկների շարանում, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ուսանողական Միաւորի նախաձեռնութեամբ հիմնգշաբթի՝ հոկտեմբերի 25-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Ն.Զ. Հայոց Ազգային «Արմէն» Կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» պրահում տեղի ունեցաւ բանախօսական երեկոյ, նիկրած Իրանի անւանի հայորդիների յշշատակին, որի առթիւ հրաիրած էր բասախօսելու Թերիանի աստղագիտութեան կենտրոնի բարձրաստիճան խորհրդական եւ գիտական կազմի անդամ, հայ ժողովորդի բարեկամ, դոկտ. Սէյեդ Հոչչաթողհաղ Հոսէնին:



Ծրագրին նարկայ էին քահանայից դասի, ազգային իշխանութեան եւ այլ մարմինների ներկայացուցիչներ, Սպահանի Պետական Համալսարանում Հայագիտական Ամբիոնի հայ եւ պարսիկ դասախոսներ եւ ուսանողներ, միութենականներ եւ այլ հրաիրեալներ:

Բացման եւ ողջոյնի խօսքով ելոյթ ունեցաւ Ուսանողական Միաւորի Վարչութեան անդամ Սելին Ղարիբեանը: Այնուհետեւ կենսագրական հակիրճ տվելներով ներկայացրեց օրիայ բանախօսին եւ նրան հրաիրեց ամբիոնի մօտ:

Յարգելի բանախօսը հայ մշակոյթի եւ պատմութեան հետ հիմնական

իր ծանօթութիւնը կապեց Իրանում «Աստղագիտութեան մայր» կոչմանն արժանացած, ծագումով նոր-ջուղայեցի դոկտ. Ալենուշ Տէրեանին, ով, բանախօսի խօսքերով, ոչ միայն դարձաւ Իրանում առաջին կին դասախօս եւ աստղագիտութեան ասպարեզում գիտութեանը մեծ ծառայութիւն ցուցաբերած, այլ նաև՝ Իրանում բարձրագոյն ուսում ստանալու գաղափարն առաջացրեց կանանց մօտ: Նա մեծ յագանքով ու երախտագիտութեամբ խօսեց Ալենուշ Տէրեանի մասին, որպէս գիտնական եւ մարդկային բարձր արժանիքներով ու յատկանիշերով օժտւած անձի, որն էլ պատճառ էր հանդիսացել նրա հետաքրքրութեանը՝ հայ մշակոյթով, որի հետեւանքով սկսել էր զբաղլել դրա ուսումնասիրութեամբ:



Պրճ. Հոսէնին անդրադարձաւ պատմութեան ընթացքում հայ-իրանական բարեկամական կապերին, նրանց համերաշխ համակեցութեանը եւ լեզուների ու մշակոյթների փոխ-ազդեցութեանը միմեանց վրայ: Նա մեծ գնահատանքով խօսեց իրանահայութեան մասին, որպէս հիմնադինների եւ առաջատար խափ՝ արթստի, արհեստի եւ գիտութեան զարգացման ու տարածման առումով, եւ որպէս գիտաշխատող, փաստացի տվելներով ներկայացրեց իրանցի 21 անւանի հայորդիների, մասնաւորապէս կենտրոնանալով ծագումով նոր-ջուղայեցի մեծահոչակ հեղինակաւորների վրայ, ներկայացրեց նրանց մատուցած ծառայութիւնները եւ հիացմունքով ու մեծ յարգանքով խօսեց նշանակած բնագաւառներում հայ կանաց աշխոյժ ներկայութեան մասին:

Բովանդակալից բանախօսութեան աւարտին, բեմ հրաիրեցին Միութեան արտօնաւուէր պրճ. Թաթուլ Օհանեսնը, Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի աւտենապետ պրճ. Նոյէլ Մինասեանը, Միութեան Կենտրոնական Վարչութեան անդամ եւ Միաւորի կապ պրճ. Նորիկ Պողոսեանը եւ Ուսանողական Միաւորի Վարչութեան նախագահ պրճ. Նարբեկ Զարդեն Դաւուդը, եւ դոկտ. Հոսէնիին յանձնեցին գնահատագիր եւ յուշանելու:

Ծրագրի աւարտին, համեստ հիւրընկալութեան ընթացքում մտերմիկ զրոյցներ եղան դոկտ. Հոսէնիի եւ ուսանողների միջնեւ, ովքեր իրենց հարցերն ուղղեցին բանախօսին եւ ստացան սպառիչ պատասխաններ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐՈՎ ԲՈՂՈՔԻ ԱՐԾԱՒ

ԹաճԾԱՀՀ ԶՈՒՄ ԱՌԱՋԱԿԱՆ ԽՈՎԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երեքաբթի՝ սեպտեմբերի 11-ի երեկոյեան ժամը 8:30-ին, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան շրջակակում, նախաձեռնութեամբ Հ.Յ.Դ. «Ռուբէն» Երիտասարդական Միութեան եւ համագործակցութեամբ «Արարատ» Միութեան Ուսանողական Միաւորի, Էլեկտրոնային նամակներով բողոքի արշակազմակերպութեամբ Հունգարիայի իշխանութեան կողմից ոճրագործ Սաֆառովին Ադրբեյչանին արտայանձնելու եւ նախագահ Ալիեւի կողմից նրան ներում շնորհելու առնչութեամբ:



Կազմակերպած միջոցառման ընթացքում պատահ վրայ ցուցադրութեամբ աշխարհի տարբեր երկրներում իրականացած Հունգարիայի կառավարութեամբ նախագահ Ալիեւի կողմից նրան ներում շնորհելու առնչութեամբ:

Շարունակութիւն 15-րդ էջից

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԵՄՈՒՏԻ ԱՊԱՀՈՒՆ ԶԱՏՎԳՔ...

որվ զարդարած դպրոցի բակում մեծ խանդավառութեամբ սպասում էին դպրոցի սաները, պատասխանատուներն ու ծնողները:



Պատվիրակութեան ժամանումից քիչ անց, հնչեց տարեմուտի առաջին զանգը եւ մանուկները թողնելով խաղահրապարակը շարբեր կազմեցին: Սկզբում Մանկապարտէզ-Նախակրթարանի տեսչութիւն տևական էր. Քառովին Դիլանչեանը բարի գալստեան խօսք ուղղելով ներկաներին, ուրախութեամբ տօնը եռակի անւանեց՝ դպրոցական տարեմուտի, Մանկապարտէզ-Նախակրթարանի աշակերտութեան

թեան անօրինական քայլը դատապարտող բողոքի գործողութիւններից նկարներ եւ տեսանիւթեր: Ցուցադրութեամբ նաև «Ա.1+»-ի հարցազրոյցը Հ.Յ.Դ. Բիլորի ինքնակազմութեամբ:

Ծովոց երկու ժամ տեսողութեամբ արշակի ամբողջ ընթացքում ներկաները, ի մասնաւորի համայնքի երիտասարդները, առիթ ունեցան մօտենալով սեղանների վրայ տեղադրուած համակարգիչներին, իրենց ընդվզումն ու բողոքն արտայատելով՝ էլեկտրոնային նամակներ յղելով նրանում Հունգարիայի եւ Հունգարիայում նրանի դեպանաւութեամբ:



Ցույած նամակներում դատապարտելով եւ պատասխանաւութեան նեթարկելով Հունգարիայի եւ Ադրբեյչանի կառավարութիւններին՝ կարեւորութեամբ ընդգծած էր, թէ անօրինական այս քայլը բացասական անդրադարձ է ունենալու Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգադրման գործընթացին:

Թի զգալի աճ արձանագրման եւ դպրոցում նոր դասարան կառուցելու համար:



Վերջում արժն. Տ. Մեսրոպ քինը. Գալստանեանը շնորհաւորելով օրիայ առթիւ, ուժ ու կորով մաղթեց դպրոցի անձնակազմին եւ սաներին: Վերամուտի արարողութիւնն աւարտւեց երեխաների աղօթքով:

Տարեմուտի ծրագրից յետոյ, պրն. Ռոբերտ Բեգլարեանի եւ Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նուլ Մինասեանի միջոցով կատարուեց դպրոցի նորակառոյց դասարանի պաշտոնական բացումը՝ կտրելով մուտքի դռան ժապաւենը:

ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏԾՈՒՄԻ ԱՌԹՈՒ ԶԵՌՈՆԱՐԿ՝ ՄԻՒՐԻԱՇ ՍԱՅԱԲ ՆԹԼԱՅԻ ԾՆՆԴԵԱՆ 300- ԱՄԵՆԿԻՆ

Նախաձեռնութեամբ Փերիոյ Կրթասիրաց Միութեան Կենտրոնական Վարչութեան, 2012 թականի հոկտեմբերի 18-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Օշեց Հայ Մշակոյթի Տօնը Ն.Զ. Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում նիրած Սայաթ Նովայի ծննդեան 300-ամեակին: Ծրագրին նախագահում էր Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը, ներկայ էին Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր հովիլ հոգչ. Տ. Անահիա վրդ. Գուճունեանը, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ներկայացուցիչները, քահանայից դասը եւ հրահրեալներ:




Երեկոն բացւեց Մարտունի Խաչիկեանի եւ Շարա Շատուրեանի ասմունքներով, որոնք ծաղկաբաղ էին Սայաթ Նովայի ստեղծագործութիւններից:

Այնուհետև հանդիսավար Անահիտ Կիրակոսեանը հանդէս եկաւ ողջոյնի եւ բարի գալստեան խօսքերով, ապա ներկայացրեց ծրագրի գեղարվեստական յայտագիրը:



Ծրագրի շարունակութեան մէջ «Նազանի» երգով հանդէս եկան Թեհրանից ժամանած Յասմիկ եւ Արա Կարապետեանները, որոնց դաշնամուրի մօտ ընկերակցում էր դոկտ. Արքի Բաբումեանը: Սիլա Ալլահվերդեանն ասմունքեց «Աշխարհումս ախ չիմ քաշի» խաղը, որից յետոյ «Աշխարհումս իմն դուն իս» պարը ներկայացրեց Միութեան «Էրեբունի» պարախումբը՝ դեկավարութեամբ Ալինա Գրիգո-

րեանի: Այնուհետեւ Յասմիկ Կարապետեանն իր թաւշեայ ձայնով մեներգեց «Քանի վուր ջան իմ»-ը:



Սայաթ Նովայի կեանքն ու գործունեութիւնն ամբողջովին ներկայացրեց բանաստեղծ, բանասէր եւ Սպահանի Պետական Համալսարանի հայագիտական ամբիոնի դասախուու՝ Ազատ Մաթեանը: Նա անդրադարձաւ Սայաթ Նովայի ծննդեանը, աշուղական կեանքին, իր աշխարհիկ ու աստածային սիրոյն, հոգեւորական կեանքին ու եղերական վախճանին: Պրճ. Մաթեանն իր խօսքն այսպէս եզրափակեց. «Մեսրոպ Մաշտոցը Հնարեց Հայ տառերը եւ մեզ տւեց այդ զէնքը: Մենք պէտք է մեր արժէքները սերնդէ-սերունդ փոխանցենք եւ պիտի աշխատենք դա կատարենք լաւագոյն ձեւով: Արժէ մեր երիտասարդութիւնը մտածի, որ մի աշուղ 300 տարի հեռաւորութիւնից դեռ ուրախութիւն, սէր ու հաւատ է փոխանցում մեզ՝ մեր ժողովրդի ու հաւատի նկատմամբ»:

Գեղարվեստական յայտագիրը շարունակեց «Նազանի» պարով, Սիլա Ալլահվերդեանի «Զէնդ քաղցր ունիս» ասմունքով, «Ամէն սազի մէշն գոված» եւ «Զկայ քիզի նման» երգերով, որոնք բոլորն էլ իրենց հերթին ներկաներին տեղափոխելով սայաթնովայական աշխարհ՝ արժանացան նրանց բարձր գնահատանքին:



Որպէս երեկոյի եզարփակիչ ելոյթ, հայրական օրինանք ու խօսք փոխանցեց գերջ. S. Բաբգէն եպս. Զարեանը, գնահատելով Փերիոյ Կրթասիրաց Միութեան Վարչութեանը, նման ծրագիր կազմակերպելու համար, որից յետոյ այսպէս շարունակեց. «Մեր թարգմանիչ վարդապետները ո՛չ միայն դարձան դպրոցներ հիմնադրող, այլ նաև՝ դաստիարակներ, քարոզիչներ, առաքեալներ ու յեղափոխականներ, ովքեր կարողացան այդ շունչն ու հոգին փոխանցել յաջորդող սերունդներին, եւ նոյն պարտականութիւն է տրւել նաեւ մեզ»:



Սրբազան Հայոն իր խօսքի շարունակութեան մէջ ասաց. «Այս երեկոյ ես ուրախ եմ, որ այս մշակութային ձեռնարկը նւիրւեց Սայաթ Նովայի ծննդեան 300-ամեակին. Սայաթ Նովան այսօր ապրում է մեր մէջ: Բայց մենք միայն անցեարով չպէտք է հպարտանանք, այլ գիտակ-



ցելով, որ մեր մշակոյթի, գրականութեան եւ արւեստի հիմնադիրներն ու ծաղկեցնողներն իրենց հոգուց, մտքից ու ամբողջ ունեցւածքն են տւել մեր ժողովրդին, այսօր ճանաչե՞նք նրանց եւ ընթերցե՞նք նրանց մեզ ժառանգած գրականութիւնը»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱԽԱՑՄԱՆ 21-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՆՅՈՒՄԸ ՓԵՐԻՈՅ ԿՐԹԱԾՈՒՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿՑԵՂԻՈՒՄ

Հինգարթի՝ 2012 թականի սեպտեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետութեան վերատեղման 21-րդ տարեդարձի նախօրեակին, խանդավառութիւն էր տիրում Փերոյ Կրթասիրաց Միութեան կենտրոնատեղիում: Վարչութեան հրաւերով ներկայ էին Միութեան անդամ-ուիթները: Հաւաքիւ էին տօնակատարելու տարիներ երազած անկախութեան 21-րդ տարեդարձը:

Օրոյ հանդիսավար տիկ. Անահիտ Կիրակոսեանը, բարի գալուստ մաղթեց ներկաներին եւ շերմօրէն շնորհաւորեց անկախութեան 21-ամեակի առթի, ապա բեմ հրաւերեց Վարչութեան նախագահ պրն. Հայկ Հայրապետանին՝ օրոյ առթի արտայայտելու: Պրն. Հայրապետանը մատնանշեց 1918 թականի մայիսի 28-ին կերտած անկախութիւնը, որը հիմք ծառայեց ներկայ իրադարձութեանը: Նա իր խօսքը շարունակեց անկախութեան առթի իր գրած ուղերձով՝ որպէս օրոյ խօսք: Առիթն օգտագործելով, դատապարտեց Հունգարիայի եւ Ադրբեյչանի գործարքը, որով ազատ արձակւեց մարդասպան Ռամիլ Սաֆառովը: Պրն. Հայրա-

պետեանը համգում յայտնեց, որ այս քայլն առիթ ստեղծեց հայ ժողովրդի համար՝ իր արդար պահանջն աւելի ուժգնորէն արծարծելու համաշխարհային մասշտապով:

Հաղորդավարն օրան պատշաճ մէջբերումներով, բեմ հրաւիրեց ինքնակամ երգիշ-ուիթներ եւ ասմունքողներ, որոնք իրենց ելոյթներով աւելի ճոխացրեցին երեկոն: Եղան նաև սրտի խօսք արտայալտողներ, որոնցից մէկը մեծ յաղթանակ համարեց հայ շախմատիստների ձեռք բերած յաջողութիւնը Թուրքիայում տեղի ունեցած միջազգային մրցութերում, որը բարձրացաւ հայկական դրոշը եւ հնչեց Հայաստանի օրիներգը:

Ծրագրի շարունակութեանը, ներկաները պարերով ընկերակցեցին հնչող հայրենասիրական երաժշտութեանը եւ ստեղծեցին խանդավար մթնոլորտ:

Վերջում ներկաները հիւրասիրեցին Միութեան Կանաց Միաւորի կողմից պատրաստած պատառներով:

**Փերիոյ Կրթասիրաց Միութեան
Կենտրոնական Վարչութիւն
Թղթակից՝ Հրանուշ Զարգարեան**

ԶՀԱՐՄԱՆԱԿԱԼ ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՐԿԱԻ ՆԵՐԲՈՅ ՆՇԻԵՑ ՀՀ ՎԱԿԱՎԱՆՈՒԹԵԱՆ 21-ԱՄՆԵԱԿԸԸ

Նախաձեռնութեամբ Հայ Ուս. «Զհարմանայ» Միութեան Նոր Զուղայի Մասնաճիւղի, ուրբաթ՝ 2012 թականի սեպտեմբերի 21-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Միութեան յարկի ներքոյ տեղի ունեցաւ տօնախմբութիւն՝ նվիրած ՀՀ անկախութեան 21-ամեակին: Միջոցառմանը ներկայ էին Միութեան անդամաններն ու մի շարք հրավիրեալներ:



Սկզբում յանուն Միութեան Վարչութեան բարի գալստեան եւ շնորհաւորանքի խօսքով հանդէս եկաւ Վարչութեան նախագահ պրեն. Ցոլակ Յարութիւնեանը: Նա ակնարկելով հայ ժողովրդի պատմութեան տարբեր հանգրանցները, մատնանշեց հայ ազգին բնորոշ յատկութիւնները: Պրեն. Յարութիւնեանի խօսքում կարեւորութեամբ ասւած էր. «Պատմութեան բոլոր էջերում եղել են հակասական ուժեր, եւ անճարակ թշնամին չի կարողացել ընկճել հային: Եւ վերջապէս 91 թւականին ստեղծեց այնպիսի պայմաններ, որի չնորհիւ դարձեալ մեր եռագոյն դրօշի ծածանման ականատեսն եղանք:»

Պրեն. Ցոլակ Յարութիւնեանն իր խօսքի աւարտին Վարչութեան եւ բոլոր միութեանականների անունից դատապարտեց Հունգարիայի կողմից հայ սպայ Գուրգէն Մարգարեանին կացնահարած դաման ոճագործին Աղբերեցանին արտայանձնելու անընդու-

նելի փաստը, իսկ շնորհաւորանքի խօսք ուղղեց ՀՀ շախմատի հաւաքականի պանծալի յաղթանակի կապակցութեամբ:



Միջոցառման շարունակութեան մէջ, Կարէն Խանլարեանն ասմունքելով Ցովիհաննէս Շիրազի «Խմ սուրբ հայրենիք» եւ «Ծաղկած հայրենիք» հայրենասիրական բանաստեղծութիւնները՝ առաւել ոգեւորեց ներկաներին:



Յաջորդիւ, Միութեան երիցագոյն անդամ տկն. Ովսան Ղարախանեանը հրավիրեց կտրելու ՀՀ անկախութեան 21-ամեակի առիթով պատրաստած խորիդանշական կարկանդակը, որից յետոյ տօնախմբութիւնը շարունակեց ջերմ մթնոլորտում՝ աշխոյժ երգերով ու պարերով:



ԾՐՁԱԳԱՅՑՈՒԹԵԻՆ ԴԵՊԻ ԲԱԾԱՆ

Նախաձեռնութեամբ Հայ Ուսումնասիրաց Զհարմանայ Միութեան Նոր Զուղայի Մասնաճիւղի Վարչութեան եւ համագործակցութեամբ Միութեան Զեռնարկային Յանձնախմբի, ուրբաթ՝ 2012 թականի սեպտեմբերի 14-ին, կազմակերպւել էր շրջագայութիւն դէպի Սպահան նահանգի Քաշան քաղաք: Մասնակցել էին թուվ 40 անհատներ: Շրջագայութիւնն սկսւեց առաւօտեան ժամը 6-ից, երբ խումբը հանրակառով մեկնեց դէպի Քաշան: Շրջագայողները միասնաբար նախանաշելուց յետով, Քաշանում այցելեցին Ֆին այգին, Թաբաթաբայիների եւ Բորուշերդիների առանձնատեսքը, որոնք պատմական մեծ արժէք ներկայացնող տեսարաժան վայրեր են:

Այցելութիւնների աւարտին, ճաշելուց յետոյ, լիցքաւորած օրիայ հետաքրքիր յուշերով վերադարձան Նոր Զուղա:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայոց Յեղասպանութեան 100-րդ Տարելիցին Նվիրւած Միջոցառումները Համակարգող Պետական Ձանձնաժողովը յայտարարում է Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին Նվիրւած տարրերանշանի (լոգօ) մրցոյթ:

Մրցոյթի ընթացքում ներկայացւած աշխատանքները պէտք է բաւարարեն յետեւալ պահանջները.

* Արտայայտեն Հայոց Յեղասպանութեան 100-րդ Տարելիցին Նվիրւած Միջոցառումները Համակարգող Պետական Յանձնաժողովի գործունէութեան նպատակը եւ առաքելութիւնը

* Ունենան պարզ լուծումներ եւ դիպուկ կարգախոս

Նախագծերը պէտք է ներկայացւեն էսքիզի տեսաքը՝ A4 Փորմատով, ստուարաթղթի վրայ, 2 տարբերակով՝ մոնոխրոմ եւ գունաւոր, ինչպէս նաև էլեկտրոնային տարրերակով:

Լավագոյն աշխատանքների համար սահմանւած են մէկ գլխաւոր մրցանակ՝ 500,000 դրամի եւ երկու խրախուսական մրցանակ՝ 250,000-ական դրամի չափով:

Յայտերը պէտք է ներկայացւեն մինչեւ 2012 թւականի դեկտեմբերի 1-ը՝ Երեւան 0028, Ծիծեռնակաբերդի Յուշահամալիք, Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտ հասցէով:

Մանրամասների համար զանգահարել՝ 39-09-81 հեռախոսահամարով:

Հայոց Յեղասպանութեան 100-րդ Տարելիցին Նվիրւած Միջոցառումները
Համակարգող Պետական Յանձնաժողովի Քարտուղարութիւն

ՏԱՐԵ-ՅՆԵՐԻ ՀԱՄԱԴԻՎԱՅՐԱՎԱՅՐԻ ՏՈՂԻ ԱՌՋԻ-ԴԱՎԱՎԱՅՐԻ ՆՐ ՀՈՒՆԱՎԱՅՐԻ ՀԱՅԱԳՐԱՎԱՐՈՒՄ



Հինգշաբթի՝ 2012 թւականի հոկտեմբերի 18-ի երեկոյեան ժամը 5:00-ից, Հայոց Ազգային Ծերանոցը կառավարող նոր Զուղայի Հայ Կանանց Գրութեան Միութեան Վարչութիւնը Ծերանոցի շրջափակում «Տարեցների համաշխարհակին օր»-աւ առիթի դաշտահանուս կազմակերպելով մեծարեց տարեցներին եւ հաճելի պահեր պարգեւեց նրանց ու միջոցառմանը մասնակցողներին:

Ծրագրի բացումը կատարեց Միութեան Վարչութեան անդամ տկն. Քրիստ Ստեփանեանը: Նա Վարչութեան անունից բարիգալստեան խօսք ուղղելով ներկաներին, հանդէս եկաւ օրիան առնչուղ հակիմ տեղեկութիւններով եւ ասաց. «Այսօր հաւաքւել ենք այս ջերմ օջախում տարեցների հետ տօնելու իրենց օրը: Տարեցները մեզանից պահանջում են ընդամենը ուշադրութիւն եւ յարգանք», վերջում աւելացնելով. «Միրելի՛ ներկաներ, իւրաքանչիւր տարեցի ժպիտը մեզ տալիս է գոհունակութիւն եւ բաւարարութիւն: Նրանց իւրաքանչիւրի օրհնանքը մեզ վրայ լինի: Եկէ՛ք միասնաբար նրանց նվիրենք այս օրը»:

Բացման խօսքից յետոյ, Վարչութեան նախագահ տկն. Արմինէ Սիմոնեանն եւս ողջունեց ներկաներին եւ տարեցներին շնորհաւորեց օրիայ կապակցութեամբ: Ապա օրիայ հանդիսավար տկն. Ռիտա Միհնանը քաղցր վերաբերունքով առաւել աշխուժացրեց մթնոլորտը: Ներկաներն ազատ բեմում առիթ ունեցան վայելելու տկնք. Արաքս Տէր-Մարտիրոսեանի, Լեռնիկ Ծատուրեանի եւ Հոդիսիկ Ալյազեանի քաղցր ձայներով երգերի ու ասմունքների կատարումները: Հարկ է նշել, որ «Անի» նագախումբն իր կենդանի կատարմամբ նոյնպէս շերմութիւն եւ աշխուժութիւն տվեց միջոցառմանը: Ծրագրի ամբողջ ընթացքում ներկաները հիւրասիրում էին Միութեան անդամութիւների միջոցով: Առաւել խանդակառութիւն ստեղծելու եւ զւարմանալու համար, կազմակերպել էին երեք մրցոյթներ, որոնց շահողներին յանձնւեցին ներկաներ:



ԱՏԱՅԱԾ ՆԻՒՐԱՏԻՌԻԹԻՆՆԵՐ

Ստուգում նախորդ համարից.

Ն.Զ. Հայ Կանանց Գթութեան Միութեան ստացած բոլոր նւրասութիւնները նոր Զուղա Տեղեկատուի 91-րդ համարի մէջ (յուղիս-օգոստոս, 2012) պէտք է նկատի առնել թումանով:

Ն.Զ. Հայոց Առաջնական Եկեղեցեաց Վարդութիւն

- 2,000,000 դիալ. Սեւակ եւ Արսինէ Պետրոսեաններ:

Ս. Գէորգ եկեղեցի

- 1,915,000 դիալ. Շայան:

- 1,800,000 դիալ. Մանէ Բարսեղեան:

- 500,000 դիալ. Վարդան Խաչիկեան:

- 300,000-ական դիալ. Լորեթա Միրզայեան, Մինաս Գէորգեան, Ղաֆարի:

- 250,000-ական դիալ. Կարէն Ղարախանեան, Հերեն Մովսիսեան:

- 200,000-ական դիալ. Ժորժիկ Արդալեան, Վերժին Սահակեան, Ալլահինարի:

- 120,000 դիալ. Անիթա Ֆարիադի:

- 100,000-ական դիալ. Ալին եւ Արին Թորոսեաններ, Յառութ Մարկոսեան, Օփիկ Փուլատեան, Մաղլէն Խաղովեան, Արաքս Մինասքանեան, Թաղէ Սէր-Աղայեան, Մահթաք Նիքահադ, ոմն:

- 50,000-ական դիալ. Էնրիքօ Շահիշանեան, Արուսիկ Թահմագեան, Մարիկ Մարտաւեան, Ալինեզա Հարի:

Ս. Սարգս եկեղեցի

- 700,000 դիալ. Ռազմիկ Բաղրամեան:

- 100,000 դիալ. Հոփիսիկ Սիմոնեան:

Ս. Ասուլածածին եկեղեցի

- 200,000 դիալ. Շահէն Մինասքանեան՝ Սարմէն Մինասքանեանի յիշատակին:

Խաչ գոյգելու առթիւ - Ս. Գէորգ եկեղեցի

- 300,000 դիալ. Մարիամ Մինասեան:

- 200,000 դիալ. Լիա Սահակեան:

- 150,000 դիալ. Շառիֆ-Նիա:

- 100,000 դիալ. Էնրիքօ Շահիշանեան:

- 60,000 դիալ. Աննիկ Դանիէլեան:

- 30,000 դիալ. Մարիամ Շառուկեան:

Ս. Ասուլածածին Տօնի առթիւ

Ս. Մինաս եկեղեցի

- 150,000 դիալ. Արդիան եւ Էմիլի Մկրտչեաններ:

- 100,000 դիալ. Վահիկ Մկրտչեան:

- 50,000-ական դիալ. Լուսիկ Յառութիւնեան, Սիրան Ղարեւան, Մարինէ Մկրտչեան, Արգամ Թորոսեան (Ցովսէփեան), Թէոդիկ եւ Դիոն Վարդանեաններ՝ իրենց հօր՝ Սերժիկ Վարդանեանի յիշատակին:

Ս. Ասուլածածին եկեղեցի

- 500,000 դիալ. Մարիետ Խոջեմալ, Պողոս Թահմագեան իր տիկնոց՝ Արմենուիր Թահմագեանի յիշատակին, Դերիկ, Էրիկ, Ուրֆա, Արփա եւ Անի:

- 200,000 դիալ. Անահիտ Շահիշանեան, Արիկ Ղեւեան:

- 100,000 դիալ. Վահիկ, Վանէ եւ Անի Սէր-Մարտիրոսեաններ, Նորիկ Յառութիւնեան:

- 50,000-ական դիալ. Զանիկ Մարկոսեան, Աղայինի Մարկոսեան, Էրո Հայրապետեան, Վազրիկ Վարդանեան:

- 10,000 դիալ. Մարգար Խոջեմալ Խոջեմալ:

Ս. Ստեփանոս եկեղեցի

- 500,000 դիալ. Վահիկ, Խետս, Մանէ եւ Մամբրէ Թահմա-

քեանցեր:

- 300,000 դիալ. Նազիկ Եադգարեան:

- 200,000-ական դիալ. Սինթիա Պողոսեան, Դիանա Ղարախանեան՝ Արգար Գալստեանի յիշատակին, Անի Քրիստին եւ Արենի Աղաբարպեան:

- 150,000-ական դիալ. Գառնիկ Մելիքեան, Ալվարդ Զարգարեան:

- 100,000-ական դիալ. Ռիմա Դիլանչեան՝ իր հօր՝ Աստուածութեան թուղթութեան, Վարդութ Սարուհանեան, Կիտութ Օհանեան, Մերի Աղախանեան, Հոփիսիկ Ռոստոմեան, Արմինէ Խաչատրեան, Լորեթա Վարդանեան:

- 60,000 դիալ. Հրանուշ Փանոսեան:

- 50,000-ական դիալ. Արմինէ Թորոսեան, Ժանեթ Աղամազեան, Սալրի Ղազարեան, Գալլութ Մողոսեան, Գայխանէ Մինասեան, Խաթումինի Մարգարեան, Սոնիկ Խասովուկեան, Ալիս Խուլդավերդեան, Մասիս Ցովսէփեան, Մագի Տէր-Մարտիրոսեան, Սելին Օրդուբեգեան:

- 40,000 դիալ. Ղազար եւ Արաքս Թահմագեաններ, Շուշան Թահմագեան, Լինեթ Թորոսեան:

Հանգուցեալ Աստղիկ Մարգարեանի յիշատակին

- 500,000 դիալ. Ռաբեր եւ Քառոյին Ղեւնոնդաններ:

- 200,000-ական դիալ. Շահէն Թահմագեան, Վազրիկ Ղազարեան:

- 100,000-ական դիալ. Արդալ Ցովսէփեան, Արշալուս Խուլդավերդեան:

- 50,000-ական դիալ. Ղանիկ Ղազարեան, Երևան Խաչիկեան, Կարո Շահբագեան, Արգար Ղազարեան, Սոնիկ Կիրակոսեան:

- 30,000-ական դիալ. Հրանուշ Հայրապետեան, Պայծան Թահմագեան:

- 20,000 դիալ. Ժենիկ Քեշիշեան:

Հանգուցեալ Աստղիկ Մարգարեանի յիշատակին

- 300,000-ական դիալ. Խեցոն եւ Ժանեթ Խուլդավերդեաններ, Արաքս Պողոսեան:

- 200,000-ական դիալ. Աշխէն Մկրտչեան, Երանուիր Բարդութեան, Զարեն, Յասինկ եւ Վարդութ Քաշարեան, Գերգ եւ Արմինէ Խաչիկեաններ, Մար Արգարեան, Համօ եւ Մանուշ Պողոսեաններ, Սուրբ Մարգարեան, Միսակ Թահմագեան:

- 150,000-ական դիալ. Լայա Բաղրամարեան, Գառնիկ եւ Օդեր Բաղրամարեաններ, Զանի եւ Թագուշ Բաղրամարեաններ, Արմինէ Թահմագեան:

- 100,000-ական դիալ. Ռոբերտ Ակոն, Էրիկ եւ Սեղան Այազբագեաններ, Լորիկ Բաղրամարեան:

- 50,000 դիալ. Լուսիկ Խասիսանեան:

Հանգուցեալ Արմենուկի Բաղրամարեանի յիշատակին

- 500,000 դիալ. Սերժիկ, Մատիթա, Արթուր եւ Աւենի Բաղրամարեաններ:

- 300,000-ական դիալ. Ն.Զ. Հայուինաց Բարեգործական Ընկերութիւն, Անդրէ Զարգարեան:

- 250,000-ական դիալ. Գուրգէն Թահմագեան, Նորայր Թահմագեան, Երանուիր Բարդութեան, Նապիկ եւ Լայա Մելիքեաններ, Զանի եւ Թագուշ Բաղրամարեաններ, Գառնիկ եւ Օդեր Բաղրամարեաններ:

- 200,000-ական դիալ. Արաքս Թահմագեան, Վրէժ եւ Շաղկուշ Խաչատրեաններ, Վարդութ Զարգարեան, Հերմինէ Թահմագեան:

- 150,000-ական դիալ. Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչա-

խումբ, Լորեթա Միրզայեան, Լորիկ Բաղդասարեան, Անդրէ Յովհաննիստեան:

- 100,000-ական ոիալ. Սոնիկ Կիրակոսեան, Վարդանուշ Թահմագեան, Զաւէն Կիրակոսեան, Ղազար եւ Արաք Թահմագեաններ, Նարդ Կիրակոսեան, Վազրիկ Մարկոսեան, Կարէն Յարութիմեան:

- 70,000 ոիալ. Էլիզ Տէր-Սուփիազեան:

- 50,000 ոիալ. Մուշեղ Ղարիբեան:

Հանգուցեալ Արշամ Աղախանեանի յիշատակին

- 100,000-ական ոիալ. Տ. Վարդան քին. եւ Երեցկին Անահիտ Աղաքաբայեաններ, Արթին Նազարեան, Վարդուշ Յակոբեան, Մարտ Տէր-Յովինաննիստեան, Արդար Յովսէփեան:

- 70,000-ական ոիալ. Հոփիսիկ Համբարչեան, Գուրգէն Թահմագեան:

- 50,000-ական ոիալ. Կակաջ Քեշիշեան, Վարդան Խաչիկեան, Սար Շահրապեան, Անուշ Թահմագեան, Սոնիկ Գէորգեան:

Հանգուցեալ Մարջան Գրիգորեանի յիշատակին

- 200,000-ական ոիալ. Շահէն Թահմագեան, Վազրիկ Ղազարեան:

- 100,000-ական ոիալ. Արդար Յովսէփեան, Արշալոյս Խուդավետեան, Սոնիկ Մինոնեան:

- 50,000-ական ոիալ. Զանիկ Ղազարեան, Երևանի Խաչիկեան, Կար Շահրապեան, Արգար Ղազարեան, Սոնիկ Կիրակոսեան:

- 30,000-ական ոիալ. Հրանուշ Հայրապետեան, Պայծառ Թահմագեան:

- 20,000 ոիալ. Ժենիկ Քեշիշեան:

Հանգուցեալ Սաքօ Ղեւոնդեանի յիշատակին

- 500,000 ոիալ. Ռաբերտ եւ Քառոյին Ղեւոնդեաններ:

Հանգուցեալ Սիրարփիկ Ցովհաննիսեանի յիշատակին

- 300,000 ոիալ. Արտաւազդ Փանոսեան:

- 200,000 ոիալ. Հերոս Յովհաննիստեան:

- 100,000-ական ոիալ. Վարդուշ Յակոբեան, Վարուժ Փանոսեան:

- 50,000 ոիալ. Լուսիկ Շահրապեան:

Հանգուցեալ Եղիսաբեթ Խսախանեանի յիշատակին

- 500,000 ոիալ. Ալագեան:

- 300,000 ոիալ. Ն. Զ. Հայութեաց Բարեգործական Ընկերութիւն:

- 200,000-ական ոիալ. Զորիկ Յարութիւնեան, Արք եւ Մելին Բարումեաններ:

- 100,000-ական ոիալ. Վարդուշ Զարգարեան, Հրանդ Զարգարեան, Սերժիկ եւ Ալենուշ Ասատրեաններ, Վարուժ Եսմենի:

- 50,000 ոիալ. Սիրվարդ Թորոսեան:

Հանգուցեալ Բալասան Գրիգորեանի յիշատակին

- 100,000-ական ոիալ. Արդար Յովսէփեան, Հերմին Թահմագեան:

- 50,000-ական ոիալ. Երանուշ Մահմագեան:

- 50,000-ական ոիալ. Երանուշ Աղաքաբայեաններ, Սոնիկ Կիրակոսեան:

Հանգուցեալ Արամիկ Տէր-Մարտիրոսեանի յիշատակին

- 500,000 ոիալ. Հերոս Տէր-Մարտիրոսեան:

- 100,000 ոիալ. Սերժ Վարդանեան:

- 50,000-ական ոիալ. Անուշաւան եւ Հրանուշ Աղաքաբայեաններ, Սոնիկ Կիրակոսեան:

Հանգուցեալ Անդրանիկ Տէր-Մարտիրոսեանի յիշատակին

- 200,000 ոիալ. Հերոս Տէր-Մարտիրոսեան:

- 50,000 ոիալ. Սոնիկ Կիրակոսեան:

Հանգուցեալ Սարմէն Մինասքանեանի յիշատակին

- 200,000 ոիալ. Վահիկ, Փալիկ եւ Վալենթին Դավթեաններ:

- 100,000-ական ոիալ. Արդար Յովսէփեան, Արարատ Աղախանեան, Վահիկ Սարմէն Թորոսեաններ, Ռազմիկ Խուդավերդեան:

- 50,000-ական ոիալ. Թէրեզ Յակոբեան, Վազրիկ Մելքոն:

Հանգուցեալ Քրիստինէ Մարկոսեանի յիշատակին

- 200,000 ոիալ. Հայդով եւ Ռիմա Յովհաննիստեաններ:

- 50,000-ական ոիալ. Ժենիկ Քեշիշեան, Պայծառ Թահմագեան, Համօն եւ Ռիտա Մկրտչեաններ, Մուշեղ Բարկոսեան:

- 40,000 ոիալ. Էդարդ Շահմիրզայեան:

Հանգուցեալ Ղազար Տէրտէրեանի յիշատակին

- 500,000 ոիալ. Մուշեղ Ղարիբեան:

- 100,000-ական ոիալ. Կանանց Հոգենոր Լսարան եւ «Ծուշանիկ» երգախումբ, Արդար Յովսէփեան, Գարեգին Մարկոսեան, Ռուբէն Մարկոսեան, Ավան Սարեան:

- 70,000 ոիալ. Հերմիկ Ղարիբեան:

- 50,000-ական ոիալ. Խաչատոր Ղազարեան, Ժորժ Ռաթեան:

- 40,000 ոիալ. Շահէն Օհանեան:

Հանգուցեալ Անահիմ Տէր-Մկրտչեանի յիշատակին

- 400,000-ական ոիալ. Դիանա Ղազարեան, Մագի Հայկեան:

- 300,000-ական ոիալ. Ն. Զ. Հայութեաց Բարեգործական Ընկերութիւն, Մելքոն եւ Ռոզի Մելքոնեաններ:

- 150,000-ական ոիալ. Ժորժ Թահմագեան, Արար Սիմոնեան, Երանուիր Բարեգործական:

- 100,000-ական ոիալ. «Ծուշանիկ» երգախումբ, Ովսան Պետրոսեան, Աշխեն Մկրտչեան, Ռողանուիր Ղեւեան, Անդրանիկ եւ Անահիմ Յարութիւնեաններ, Անուշ Յովհաննիստեան, Աղանի Ղարիբեան:

- 80,000 ոիալ. Շողեր Խաչիկեան:

- 70,000 ոիալ. Աննիկ Խաչիկեան:

- 50,000-ական ոիալ. Վարդուշ Սարուխանեան, Թէրեզ Յակոբեան, Երանու Խաչիկեան, Լուսիկ Մարտոյեան:

Հանգուցեալ Ովսաննա Պարսամեանի յիշատակին

- 300,000 ոիալ. Արմէն եւ Ժենիկ Պարսամեաններ:

- 220,000 ոիալ. Ս. Մինաս Եկեղեցու յանձնախումբ:

- 200,000 ոիալ. Վազրիկ Մարկոսեան:

- 150,000 ոիալ. Ն. Զ. Հայ Մ. Մ. «Արարատ» Միութեան Երեցների Միաւոր:

- 100,000-ական ոիալ. Կանանց Հոգենոր Լսարան եւ «Ծուշանիկ» երգախումբ, Նարդ Կիրակոսեան, Արդար Յովսէփեան, Ժորժ Մարտիրոսեաններ, Ռազմիկ Սարմէն Մարկոսեան, Զաւէն Մուրադեան:

- 50,000-ական ոիալ. Ղանիկ Ղազարեան, Լուսիկ Յարութիւնեան, Գետիկ Կարապետեան, Մարտ Մուրադեան, Սերժ Վարդանուշ, Վարդուշ Զարգարեան, Հրանդ Զարգարեան, Ռազմիկ Սարմէն Մարկոսեաններ, Ռուբէն Մարին Խուդավերդեաններ, Սարգս Եսմենի:

Հանգուցեալ Ժառաննա Պարսամեանի յիշատակին

- 500,000-ական ոիալ. Ն. Զ. Հայ Մ. Մ. «Արարատ» Միութիւն, Գանիկ Զարգարեան:

- 400,000 ոիալ. Ասպետ Խաչիկեան:

- 200,000-ական ոիալ. Վրէժ Շիրամեան, Անդրէ Խաչիկեան:

- 150,000-ական ոիալ. Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Երէցների Միաւոր, Սեւակ եւ Արմինէ Բաղրամեաներ, Արթին Դաւթեան:

- 100,000-ական ոիալ. Արդալ Յովսէփեան, Սոնիկ Զոհրաբեան, Մուշեղ Ղարիբեան, Շաքեր Ակն, Մարտ Բաղրումեան, Սաթի եւ Սոնա Զարգարեաններ, Վարուժ եւ Անժել Ղարախանեաններ, Վազրիկ եւ Հրաչիկ Միրզախանեաններ, Դավիթ եւ Սիմե Յովսէփեաններ, Մարգարիտ եւ Արմինէ Զարգարեաններ:

- 80,000 ոիալ. Հայկազ Ղազարեան:
- 60,000 ոիալ. Լոսիկ Մարտոյեան:
- 50,000-ական ոիալ. Կարօ Շահրազեան:

Հանգուցեալ Թամար Կիրակոսեանի յիշատակին

- 100,000-ական ոիալ. Մանսս Աղախանեան, Արտուշ Դիլանչեան:

- 50,000 ոիալ. Շաւաշ Անջովեան:

Ստուգում նախորդ համարից.

Ա. Յովհաննու եկեղեցու տօնին Մարիամ Մինասեանը նւիրել է 150,000 ռիալ, որը սխալմամբ գրւել էր 50,000 ռիալ:

Հայ Ուս. «Զհարմահալ» Միութեան Ն. Զ. Մասնաշիւլ

ՀՀ վերանկախացման 21-րդ տարեդարձի առթիւ

- 500,000-ական ոիալ. Անդրէ Յովհաննիսեան, Մկրտիչ Զհարմահալ, Վարուժ Ղարախանեան:

- 400,000 ոիալ. Ցոլակ Յարութիւնեան:
- 300,000-ական ոիալ. Ցաւերժիկ Կարապետեան, Տիգրանուիշ Մանուկեան, Սոնիա Միրզաքեգեան:
- 200,000-ական ոիալ. Վաչէ եւ նոռա Շահիջանեան, Ովսաննա Ղարախաննեան, Անուշ Օհաննեան, Լիդուշ Կարապետեան, Ալֆրեդ Ղարախանեան:

- 150,000-ական ոիալ. Իւեն Բալեան, Լորեթա Միրզայեան, Հայրուկ Մարգարեան, Արմինէ Փանոսեան, Սեւակ Խարունեան, Արեիկ Փանոսեան, Ծաղկուշ Եղագարեան, Արմինէ Ղարախանեան:

- 100,000-ական ոիալ. Սանդրա Խաչատրեան, Լիդա Յակոբեան, Վայեն Հայրապետեան, Վարդուհի Ղարախաննեան, Նուարդ Վարդանեան, Սայիկ Մարտիրոսեան, Վարդան Փանոսեան, Նուարդ Վարդանեան, Վասիլ Փանոսեան, Պերճիկ Քամարզարեան, Բիւզանդ Բարունեան, Հրանտ Ղարախաննեան, Գեղանի Ղարիբեան, Ֆրիդա Ալլահվերդեան, Այլին Արդալեան, Սիրանուշ Բարունեան:

- 60,000 ոիալ. Համազիւր Մարգարեան:
- 50,000-ական ոիալ. Սարենիկ Սիմոննեան, Խանիքերի Սի-

մնեան, Այրա Աղամալեան:

Ն.Զ. Հայ Կանանց Գրութեան Միութիւն

Արցախի դպրոցներին օժանդակելու առթիւ

- Գրենական այսուղըներ. Ն.Զ. Հայումնեաց Բարեգործական Ընկերութիւն, «Շուշանիկ» երգախումբ, Ելենա Ղազարեան, Անահիտ Խաղողուտեան, Ժենիկ Քեշիշեան, Զարեհ Ղարախաննեան, Օֆիկ Փուլադի, Վանէ Թորոսեան, Արմէն Բարումեան, Այօ Բաշիբեան, Մատիթիք Բամբանեան, Արմնէ Մանուրեան, Վահիկ, Սոնիա, Երգինէ եւ Ռոլանդ Այլազեաններ, Դինն Ասատրեան, Լիլիկ Պողոսեան, ոմն:

- Ընդհանուր գումարով՝ 13,100,000 ոիալ. Հայ Ուս. Զարմահալ Միութիւն, Կանանց Հոգեւոր Հարան, Վարուժ եւ Սթելլա Վարդաննեաններ, Այդա Պողոսեան, Ֆրիդա Ալլահվերդեան, Ֆլորա Ալահվերդեան, Շազմիկ Տէր-Գրիգորեան, Սամսն Զարգարեան, Աշխեն Մկրտչեան, Լենն Մինասեան, Երանուիք Բարդուղեան, Մատիկ Մինասեան, Վանուիք Մովսէսեան, Երան Խոդավերդեան, Աճի եւ Արփի Ղազարեաններ, Նուրդ Շահնազարեան, Անջիկ Խոդավերդեան, Ժաներ Այազեան, Շաղլուշ Դաւթեան, Այդա Խոդավերդեան, Օվսան Ղարախաննեան, Ակենուշ Շահնեան, Ժանիկ Թորոսեան, Ժաներ Խոդավերդեան, Ժանիկ Մովսէսեաններ, Գեղողա Մինասեան, ոմն:

Հայոց Ազգային Մերանոց

- Վերեակ. Աննիկ Խոդավերդեան՝ իր ամուսնու՝ Խախան Խոդավերդեանի յիշատակին:

- ՄԵկ զոյկ չար. Մքաղեթ Շահրազեան:
- Սուրբի Բիւրապետութիւն. Խեջո Խոդավերդեան, Սիլվարդ Աղախաննեան:
- Խորոված. Մանիա Խոդավերդեան:
- Արմա եւ խնձոր. Ֆալլահի-հովու:
- Խմորեղին. Արմինէ Սիմոննեան, Սքաղեթ Շահրազեան, Վանուիք Մովսէսեան:
- Վարենի. Անահիտ Կիրակոսեան
- Սուրբ. Արաքս Խոդավերդեան, Վարուշ Ղազարեան:

Ն.Զ. Հայոց Գերեզմանաւարան Բայեկարդման Յանչախումբ

- 500,000-ական ոիալ. Վրէժ Մինասեան, Վազգէն Օհաննեան:

- 200,000 ոիալ. Հայոց Ազգային «Կատարիննեան» դպրոցի ուսուցչական կազմ եւ Ծնողական Խորհուրդ՝ տկն. Արմենուիք Թահիմազեանի մահիան առթիւ փոխան ծաղկեպսակի:

ՄԵՐ ՀԱՍՏԵՒ

Խլիֆե گրի արամե Ջլվայ Ճշգան

և Ջնու Իրան

ՀԱՅՀՅՈ/115 81235/15

Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran

E-mail: Sourby@yahoo.com

Tel: +98-311-6243471-2

Fax: +98-311-6270999